



1. Առարկա

1.1. Սույն Ընդհանուր Դրույթները և Պայմանները (**Պայմաններ**) սահմանում են «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից բաժանորդին հանրային շարժական կապի ծառայությունների և էլեկտրոնային հաղորդակցության այլ ծառայությունների մատուցման հիմնական դրույթներն ու պայմանները:

1.2. Օրանժը գործում է ORANGE ապրանքային նշանի ներքո, որը պատշաճ կերպով գրանցված և պաշտպանվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

1.3. Սույն Պայմանները սահմանվում են Օրանժի կողմից, հանդիսանում են հրապարակային օֆերտա (առաջարկ)՝ հրապարակված Օրանժի վեբ կայքում (www.orangearmenia.am) և Ձեր կողմից կարող է ընդունվել միայն դրանց ամբողջությամբ միանալով: Ձեր կողմից սույն օֆերտան ընդունելու (ակցեպտավորելու) պահից, սույն Պայմանները, Ծառայությունների բաժանորդագրման դիմումի և դրա հավելվածների (**Դիմում**), առանձին Ծառայությունների վերաբերող Հատուկ Դրույթներ և Պայմանների (**Հատուկ Պայմաններ**), եթե կիրառելի է, Ծառայությունների Գնացուցակի, Սակագնային Պլանի և Առաջարկների Նկարագրի հետ միասին հանդիսանում են Ձեր և Օրանժի միջև կնքված պարտադիր ուժ ունեցող միանալու պայմանագիր (**Բաժանորդային Պայմանագիր**): Նշված փաստաթղթերի միջև տարբերությունների և հակասությունների առկայության դեպքում համապատասխան փաստաթղթերի դրույթները կիրառվում են հետևյալ գերակայությամբ՝ Դիմում, Հատուկ Պայմաններ, սույն Պայմաններ և Գնացուցակ, Սակագնային Պլան, Առաջարկների Նկարագիր:

2. Սահմանումներ

2.1. **Օրանժ**՝ «Օրանժ Արմենիա» ՓԲԸ՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրամադրված լիցենզիայի և թույլտվությունների հիման վրա ՀՀ-ում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող:

2.2. **Բաժանորդ** կամ **Դուք**՝ ցանկացած անձ, ում հետ կնքվել է Բաժանորդային Պայմանագիր:

2.3. **SIM Քարտ**՝ միկրոչիպով քարտ, որն ապահովում է սարքավորման նույնականացումը և ցանցն օգտագործողի տարբերակումը, հասանելիությունն Օրանժի Ցանցին և Ծառայություններին:

2.4. **Հեռախոսահամար**՝ Օրանժի համարային ռեսուրսներից Բաժանորդին հատկացված կանչի հեռախոսահամար, որը հնարավորություն է տալիս նույնականացնել Օրանժի Ցանցին միացված սարքավորումը և SIM քարտը:

2.5. **Բիլինգային Համակարգ**՝ ավտոմատացված համակարգ, որը հաշվառում է Բաժանորդին մատուցված Ծառայությունները, դրանց դիմաց կատարված գանձումներն ու ստացված վճարումները և ներկայացնում ամփոփ արդյունքները:

2.6. **Բիլինգի Օր**՝ յուրաքանչյուր ամսվա վերջին օրը կամ Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ օր, երբ ամփոփվում է Բիլինգային ժամանակաշրջանում Բաժանորդին մատուցված Ծառայությունների դիմաց գներացված և Բաժանորդի կողմից արդեն վճարված կամ վճարման ենթակա գումարը:

2.7. **Բիլինգի ժամանակաշրջան**՝ Բիլինգի օրվանից մինչև հաջորդ Բիլինգի օրն ընկած ժամանակահատվածը:

2.8. **Օրանժի Ծառայություն կամ Ծառայություն**՝ Օրանժի Ցանցի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև այլ ցանցերի միջոցով, անձամբ և/կամ երրորդ անձանց ներգրավմամբ մատուցվող հանրային շարժական կապի և էլեկտրոնային հաղորդակցության այլ ծառայություններ, որոնք ներառում են՝

շարժական հեռախոսակապի, շարժական ինտերնետի, տվյալների հաղորդման, հարակից (հավելյալ արժեքով ծառայություններ (VAS), կարճ հաղորդագրություններ (SMS), մուլտիմեդիա հաղորդագրություններ (MMS) և այլն) և այլ ծառայություններ:

2.9. **Սակագնային Պլան**՝ Ծառայությունների ցանկ, որով սահմանվում են Ծառայությունների անվանումը, առանձնահատկությունները, մատուցման պայմանները, գները և այլ տեղեկություններ:

2.10. **Ցանցի Ծածկույթ**՝ աշխարհագրական տարածք, որի սահմաններում առկա է Օրանժի Ծառայություններից օգտվելու տեխնիկական հնարավորություն:

2.11. **Ծառայությունների Փաթեթներ**՝ որոշակի վավերականության ժամկետով հավելյալ ռոպեների, կարճ հաղորդագրությունների և այլ ծառայությունների փաթեթներ՝ առանց ընթացիկ Սակագնային Պլանը փոխելու անհրաժեշտության: Ծառայությունների Փաթեթների քանակը կարող է սահմանափակվել Օրանժի կողմից:

2.12. **Բաժանորդի Հաշիվ կամ Հաշիվ**՝ Բիլինգային Համակարգում վերլուծական հաշվարկի ռեգիստր, որն հաշվառում է Բաժանորդին մատուցված Ծառայությունների ծավալը, դրանց դիմաց կատարված գանձումները և Բաժանորդից ստացված վճարումները:

2.13. **Հաշվեկշիռ**՝ Բաժանորդի Հաշվի տվյալների հիման վրա հաշվարկային եղանակով սահմանված մեծություն, որը հանդիսանում է ժամանակի պահի դրությամբ Բաժանորդի կողմից օգտագործված Ծառայությունների և կատարված վճարումների տարբերությունը:

2.14. **Տրաֆիկ**՝ էլեկտրոնային տեղեկատվության միավորների ագրեգացիա, որը ներառում է ձայնային և SMS հաղորդագրություններ, ազդակներ/ազդանշաններ և այլ տվյալներ, որոնք փոխանցվում են էլեկտրոնային հաղորդակցության ցանցի միջոցով:

2.15. **Ծառայության Օգտագործման Վայր**՝ Ցանցի Ծածկույթում ցանկացած տարածք, որտեղ Բաժանորդը կարող է հասանելիություն ունենալ Ծառայությանը:

2.16. **Օրանժի Ցանց**՝ շարժական կապի գլոբալ (GSM-Global Systems for Mobile Communications), միջազգային կամ համընդհանուր հեռահաղորդակցության (3G-IMT-2000 (International Mobile Telecommunication)/UMTS-Universal Mobile Telecommunication Systems) համակարգերով, 3G+ (HSPA), 3G (UMTS) և 2G (GPRS/GSM/EDGE) տեխնոլոգիայով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև այլ համակարգերով և տեխնոլոգիայով աշխատող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանց:

3. Բաժանորդային Պայմանագիր

3.1. Սույն Պայմաններն համարվում են ակցեպտավորված Օրանժի Ծառայություններին բաժանորդագրվելու պահից, ինչպես նաև Բաժանորդային Պայմանագրի կատարմանն ուղղված գործողությունների կատարմամբ:

3.2. Օրանժի Ծառայություններին բաժանորդագրումն իրականացվում է Օրանժի կողմից հաստատված ձևի Դիմումը ստորագրելով և ներկայացնելով առձեռն, իսկ Օրանժի կողմից սահմանված դեպքերում՝ ներկայացնելով էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով (փոստով, SMS-ով, զանգահարելով Հաճախորդների սպասարկման կենտրոն, վեբ կայքի միջոցով և հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցներով), որոնք հնարավորություն են տալիս նույնականացնել Ձեզ՝ հաստատելով, որ պահանջը ներկայացվել է Ձեր կողմից:

3.3. Բաժանորդային Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Գնացուցակը, Սակագնային Պլանը և Առաջարկների Նկարագիրը, որոնք ներառում են Օրանժի



կողմից առաջարկվող Ծառայությունները, Ծառայությունների նկարագրությունը, ցանկը, դրանց նկատմամբ կիրառվող գները, Ծառայությունների մատուցման պայմանները, առանձնահատկությունները և այլ անհրաժեշտ տեղեկությունները սահմանվում են Օրանժի կողմից և անվճար հասանելի են Ձեզ Օրանժի վեբ կայքից (www.orangearmenia.am), որը համարվում է զանգվածային լրատվության միջոց, այլ ԶԼՄ-ներից, Օրանժի հաճախորդների սպասարկման կենտրոնից, Օրանժի վաճառքի և սպասարկման կետերից կամ Օրանժի կողմից սահմանված այլ միջոցներից:

3.4. Ըստ մատուցվող Ծառայության առանձնահատկությունների՝ Օրանժը կարող է այդպիսի Ծառայություններից օգտվելու հայտ ներկայացրած Բաժանորդի կամ Բաժանորդների խմբերի համար սահմանել այլ պայմաններ, որոնք կամրագրվեն առանձին պայմանագրով:

3.5. Մինչև Ծառայություններից օգտվելը Դուք պարտավոր եք պահանջել Ծառայությունների մատուցմանը վերաբերող բոլոր նյութերը և փաստաթղթերը: Որոշ նյութեր կամ փաստաթղթեր, որոնք հասանելի են Օրանժի վեբ կայքում, Ձեզ չեն տրամադրվում թղթային տարբերակով, եթե Դուք չեք պահանջում: Նախքան Ծառայություններից օգտվելը Դուք պարտավոր եք ծանոթանալ Բաժանորդային Պայմանագրի դրույթներին, Ցանցի Ծածկույթին, Ծառայությունների ցանկին և գներին, այդ թվում՝ ռոումինգի սակագներին և Ծառայությունների մատուցման մյուս պայմաններին և առանձնահատկություններին, իսկ բաժանորդագրումից հետո՝ հետևել դրանց փոփոխություններին:

4. Բաժանորդ և Բաժանորդագրում

4.1. Բաժանորդագրման ժամանակ Օրանժն իրավունք ունի Ձեզից պահանջել փաստաթղթեր, որոնք հաստատում են Ձեր անձը, հասցեն, իրավաբանական անձի, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական գրանցան կամ հաշվառման տվյալները, ներկայացուցչի միջոցով Բաժանորդային Պայմանագիր կնքելու դեպքում՝ ներկայացուցչի լիազորությունները և անձը հաստատող փաստաթղթերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր: Օրանժն իրավունք ունի պահանջել փաստաթղթերի բևօրինակները:

4.2. Ձեր ներկայացուցչին Ձեր անունից գործողություններ կատարելու լիազորություն տրամադրող փաստաթղթի գործողության դադարման կամ անվավերության դեպքում, Դուք պարտավոր եք առավելագույնը 3 (երեք) օրացուցային օրվա ընթացքում տեղեկացնել Օրանժին՝ այցելելով Օրանժի վաճառքի և սպասարկման կետ: Մինչև նման փոփոխության մասին Օրանժին տեղեկացնելը, Ձեր ներկայացուցչի պահանջների կատարմանն ուղղված Օրանժի գործողությունները և դրանց արդյունքում ծագած պարտավորությունները համարվում են իրավաչափ և կատարված Ձեր անունից:

4.3. Օրանժն ապահովում է բաժանորդագրման համար դիմողների առանց խտրականության հասանելիությունը Ծառայություններին: Օրանժն իրավունք ունի հրաժարվել Բաժանորդային Պայմանագիր կնքելուց և/կամ Ծառայություններին կամ դրանց մի մասին հասանելիություն ապահովելուց հետևյալ հիմքերից թեկուզ և մեկի առկայության դեպքում՝

4.3.1. դիմումատուն արդեն հանդիսանում է կամ նախկինում եղել է Օրանժի Բաժանորդ և ունի ժամկետանց պարտավորություններ,

4.3.2. դիմումատուն նախկինում օգտվելով Օրանժի կողմից առաջարկվող Ծառայություններից կամ խթանիչ առաջարկներից, թույլ է տվել կեղծիքներ կամ չարաշահումներ (Բաժանորդի նախաձեռնությամբ մեկից ավելի անգամ

Բաժանորդային Պայմանագրից հրաժարվելը, Օրանժի կողմից Բաժանորդային Պայմանագիրը դադարեցնելը Բաժանորդի կողմից խախտում կատարելու հիմքով և այլն),

4.3.3. դիմումատուն չի ներկայացնում կամ Օրանժի կողմից պահանջվող պատշաճ ձևով չի ներկայացնում բաժանորդագրման, Ծառայություններին միանալու կամ դրանցից օգտվելու համար Դիմումը, այլ փաստաթղթերը կամ տեղեկությունները (օր.՝ դիմումը ըստ նրանում պարունակվող տեղեկությունների չի համապատասխանում Օրանժի կողմից սահմանված դիմումի ձևին), Բաժանորդի կողմից ներկայացված փաստաթղթերում կամ տեղեկություններում առկա են կեղծիքներ,

4.3.4. դիմումատուն տվյալ Ծառայությունից օգտվելու համար գնահատվում է անվճարունակ կամ անհուսալի պարտապան կամ չի բավարարում Օրանժի կողմից տվյալ Ծառայության համար սահմանված վճարունակության և նմանատիպ այլ պահանջներին,

4.3.5. ՀՀ օրենսդրությամբ, Բաժանորդային Պայմանագրով և սույն Պայմաններով նախատեսված այլ դեպքերում:

4.4. Որոշակի ժամկետով Օրանժի Բաժանորդ մնալու պարտավորություն պահանջող Ծառայությունների կամ Օրանժի կողմից սահմանված այլ Ծառայությունների համար Օրանժը կարող է հրաժարվել Բաժանորդային Պայմանագիր կնքելուց, եթե դիմումատուն ունի դեռևս չկատարված որոշակի ժամկետում Օրանժի Բաժանորդ մնալու պարտականություն, չունի մշտական բնակության վայր, հաշվառված չէ Հայաստանի Հանրապետության տարածքում, Հայաստանի Հանրապետության քաղաքացի չէ կամ Հայաստանի Հանրապետությունում չունի համապատասխան կացության կարգավիճակ:

4.5. Բաժանորդային Պայմանագիր կնքելուց, Ծառայություններին կամ դրանց մի մասին հասանելիություն ապահովելուց, ապրանքի վաճառքից կամ գումարային սահմանաչափի սահմանումից կամ փոփոխումից առաջ Օրանժն իրավունք ունի իրականացնել Ձեր վճարունակության, վարկային պատմության և հուսալիության ստուգում օրենքով չարգելված ցանկացած եղանակով և աղբյուրից, այդ թվում՝ Ձեզից պահանջելով ներկայացված տեղեկատվությունը հիմնավորող լրացուցիչ փաստաթղթեր, կատարելով համապատասխան հարցումներ և/կամ պահանջելով լրացուցիչ ապահովման միջոցներ: Օրանժն իրավունք ունի Ձեր վճարունակության գնահատման համար հարցումներ կատարել ՀՀ-ում գործող վարկային բյուրոներից և ստանալ Ձեր վերաբերյալ վարկային տեղեկատվություն՝ պահպանելով օրենքի պահանջները: Սույնով Դուք թույլատրում եք սույն կետում սահմանված նպատակով Ձեր վճարունակության, վարկային պատմության և հուսալիության գնահատման համար կազմակերպության, գեկույցի և Ձեր վերաբերյալ այլ վարկային տեղեկատվության ստացումը վարկային բյուրոներից:

4.6. Օրանժն իրեն իրավունք է վերապահում սահմանափակել յուրաքանչյուր Բաժանորդին տրամադրվող SIM Քարտերի կամ Ծառայությունների քանակը և սահմանված սահմանափակումները գերազանցելու դեպքում առանց փոխհատուցման ապաստիվացնել Բաժանորդին տրամադրված բոլոր SIM Քարտ(եր)ը կամ Ծառայությունները կամ դրանց մի մասը:

4.7. Բաժանորդային Պայմանագրի կնքմամբ Բաժանորդը հավաստում է, որ ունի անհրաժեշտ իրավունակություն և գործունակություն այն կնքելու և դրանով սահմանված պարտականությունները կատարելու համար:

5. Ծառայություններ



5.1. Բաժանորդագրման տեսակը, Սակագնային Պլանը և Ծառայությունների ցանկը ընտրում եք Դուք՝ բաժանորդագրման պահին կամ Օրանժի կողմից սահմանված կարգով՝ ըստ Օրանժի կողմից առաջարկվող Ծառայությունների: Սակագնային Պլանը և Ծառայությունների ցանկը կարող է պայմանավորված լինել նաև ընտրված Ծառայությունների առաջարկի, Սակագնային Պլանի և Ծառայության նկարագրով ու առանձնահատկություններով: Ծառայությունների ցանկը պայմանավորված է նաև Ձեր սարքավորման և Օրանժի Ցանցի առանձնահատկություններով և հնարավորություններով: Ռոումինգում հասանելի Ծառայությունների ցանկը պայմանավորված է նաև ռոումինգի օպերատորի ցանցի հնարավորություններով, նրա կողմից առաջարկվող ծառայություններով, պայմաններով և սահմանափակումներով, ինչպես նաև Օրանժի կողմից կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված սահմանափակումներով:

5.2. Բաժանորդային Պայմանագիր կնքելիս Օրանժի կողմից լռելյայն ակտիվացվում է Օրանժի Ծառայությունների որոշակի ցանկ, որոնց համար լրացուցիչ վճարումներ չեն պահանջվում: Որոշ Ծառայություններ կարող են Ձեր կողմից ակտիվացվել Օրանժի վաճառքի և սպասարկման կետ այցելելու, ձայնային մեկույի, Իմ Orange էջ (my.orangearmenia.am) այցելելու, Ձեր սարքավորման կարգաբերումների (կարճ համարների մենյու, STK և այլն) միջոցով կամ այլ եղանակներով, ինչպես կառաջարկվի Օրանժի կողմից: Եթե Ծառայությունների ակտիվացման համար պահանջվում է կատարել լրացուցիչ վճարում և/կամ ներկայացնել դիմում, ապա ակտիվացումը կարող է կատարվել միայն համապատասխան վճարումները կատարելուց և/կամ դիմումը ներկայացնելուց հետո, իսկ Օրանժի կողմից սահմանված դեպքերում՝ դիմումը ներկայացնելուն կամ վճարումը կատարելուն հաջորդող ամսվա 1-ից: Նախքան լրացուցիչ վճարում պահանջող Ծառայությունների ակտիվացումը, Դուք պարտավոր եք ստուգել պատվիրվող Ծառայությունը օգտագործելու համար Ձեր սարքավորման հնարավորությունները և սահմանափակումները:

5.3. Դուք իրավունք ունեք Օրանժի կողմից սահմանված կարգով փոփոխել Ձեր կողմից նախկինում ընտրած բաժանորդագրման տեսակը, Սակագնային Պլանը կամ միևնույն Սակագնային Պլանի ներսում Ծառայությունների ցանկը, անվանափոխել հեռախոսահամարը՝ պայմանով, որ այդպիսի պահանջ ներկայացնելու պահին Օրանժի նկատմամբ չունեք չմարված պարտք (ներառյալ տույժերը, տուգանքները և Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ գումարները, եթե այդպիսիք կան), եթե այլ բան սահմանված չէ Օրանժի կողմից: Օրանժն իրավունք ունի սահմանել լրացուցիչ վճար յուրաքանչյուր այդպիսի փոփոխության համար՝ համաձայն Օրանժի կողմից սահմանված Չհանրաճանաչ: Փոփոխություն կատարելիս Ձեր Հաշվին առկա դրական Հաշվեկշիռը, բոնուսները, Ծառայության Փաթեթները, ավտոմատ գեներացված առաջարկներն ու ծառայությունները, ինչպես նաև այլ արտոնությունները ենթակա չեն վերադարձման կամ փոխանցման, եթե այլ բան չի սահմանվում Օրանժի կողմից: Փոփոխություններն ուժի մեջ են մտնում հաջորդող ամսվա 1-ից, եթե այլ բան չի սահմանվում Օրանժի կողմից:

5.4. Բաժանորդագրման տեսակի, Սակագնային Պլանի, Ծառայությունների ցանկի փոփոխությունը և լրացուցիչ Ծառայությունների ակտիվացումը իրականացվում է Օրանժի կողմից հաստատված ձևի դիմումը/համաձայնագիրը և սույն Պայմանների 4-րդ կետում սահմանված այլ անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները ներկայացնելով առձեռն, իսկ Օրանժի կողմից սահմանված դեպքերում էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով (փոստով, SMS-ով, զանգահարելով

Հաճախորդների Սպասարկման կենտրոն, վեբ կայքի միջոցով և հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցներով), որոնք հնարավորություն են տալիս նույնականացնել Ձեզ՝ հաստատելով, որ պահանջը ներկայացվել է Ձեր կողմից: Ծառայության մի առաջարկից, որը ենթադրում է որոշակի ժամկետում Օրանժի Բաժանորդ մնալու պարտավորություն, մեկ այլ առաջարկի անցումը հնարավոր է միայն սահմանված ժամկետը ավարտվելուց հետո, հակառակ դեպքում նման անցումը կդիտվի որպես Բաժանորդային Պայմանագրի լուծում, և Դուք պարտավոր կլինեք վճարել կիրառելի տույժերը, տուգանքները և Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ գումարները, եթե այլ բան չի սահմանվում Օրանժի կողմից:

5.5. Այն դեպքում, երբ Ծառայությունը Ձեզ տրամադրվել է ակցիայի կամ հատուկ առաջարկի շրջանակում կամ գեղջված, ավելի ցածր գնով կամ արտոնյալ պայմաններով, բաժանորդագրման տեսակի, Սակագնային Պլանի կամ Ծառայության ցանկի ցանկացած փոփոխություն կարող է կատարվել համապատասխան ակցիայի կամ առաջարկի պայմաններով:

5.6. Որոշ Ծառայություններ Ձեզ կարող են մատուցվել պայմանով, որ Ձեր վերջնակետային սարքավորումը համապատասխանում է տեխնիկական պահանջներին, որոնք անհրաժեշտ են նման Ծառայությունների մատուցման և դրանցից օգտվելու համար:

5.7. Օրանժի կողմից սահմանված դեպքերում և կարգով որոշակի Ծառայությունների բաժանորդագրումը կարող է իրականացվել փորձնական ժամկետով: Փորձնական ժամկետը տրամադրվում է Ծառայությունը փորձարկելու նպատակով, մասնավորապես՝ պարզելու համապատասխանում է արդյոք այն Ձեր պահանջներին և կարիքներին, առկա է Օրանժի Ծածկույթ և Ծառայություն այն վայրերում, որտեղ Դուք հիմնականում նախատեսում եք օգտվել Ծառայությունից, ծանոթանալու Օրանժի կողմից առաջարկվող Ծառայությանը և կայացնելու որոշում Օրանժի Բաժանորդ մնալու կամ բաժանորդագրումը դադարեցնելու վերաբերյալ: Նշված ժամկետում Դուք իրավունք ունեք ցանկացած ժամանակ հրաժարվել Բաժանորդային Պայմանագրից՝ առանց հրաժարման հետ կապված պարտավորությունների, եթե այլ բան չի սահմանվում Օրանժի կողմից: Փորձնական ժամկետի ավարտից հետո Դուք շարունակում եք օգտվել Ծառայություններից՝ վճարելով դրանց դիմաց ընդհանուր հիմունքներով: Փորձնական ժամկետի ընթացքում Բաժանորդային Պայմանագիրը չլուծելու դեպքում համարվում է, որ Ծառայությունը համապատասխանում է Բաժանորդային Պայմանագրին, առաջարկվող պայմաններին և ներկայացվող նկարագրին, ինչպես նաև Ձեր կարիքներին և պահանջներին: Փորձնական ժամկետը լրանալուց հետո Բաժանորդային Պայմանագրի լուծումն իրականացվում է տվյալ Ծառայությունից հրաժարման համար սահմանված ընդհանուր հիմունքներով՝ կատարելով հրաժարման հետ կապված պարտականությունները:

5.8. Ձեր նույնականացման տվյալները հանդիսանում են Ձեր անունը, ազգանունը, Հեռախոսահամարը, նույնականացման կոդը/անվանումը (եթե այդպիսիք նախատեսվում են), գաղտնաբառը (եթե առկա է), SIM Քարտի համարը, Ձեր Հաշվի հերթական համարը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, ծննդյան տարին, ամիսը և ամսաթիվը, Ձեր կատարած վերջին գործողությունները (վճարում, Հաշվեկշռի լիցքավորում, Ծառայության ակտիվացում և այլն) և այլ նմանատիպ տվյալներ, որոնք օգտագործվում են առանձին կամ միասին՝ համաձայն Օրանժի կողմից սահմանված կանոնների:



5.9. Ձեր նույնականացման տվյալները օգտագործվում են բաժանորդագրման, բաժանորդագրման տեսակի, Սակագնային Պլանի, Ծառայությունների ցանկի փոփոխության և լրացուցիչ Ծառայությունների ակտիվացման, ինչպես նաև Օրանժի կողմից Ձեզ տեղեկատվության տրամադրման, Ծառայությունների դիմաց վճարելու, և այլ դեպքերում, որոնք նախատեսված են Բաժանորդային Պայմանագրում կամ այլ կերպ Օրանժի կողմից:

5.10. Ձեր կողմից էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով նույնականացման տվյալների օգտագործմամբ ներկայացված հայտերը, պահանջները և իրականացված այլ գործողություններն ունեն նույն իրավաբանական ուժը, ինչ Ձեր կողմից անձամբ Օրանժի ներկայացուցչի ներկայությամբ ներկայացված պահանջները, հայտերը և իրականացված գործողությունները:

5.11. Դուք իրավունք ունեք ստանալ տեղեկություն Օրանժի Ծառայության առաջարկների, Սակագնային Պլանների, գների, Ծառայությունների, Ցանցի Ծածկույթի, գանձված գումարների, պարտքերի, Հաշվեկշռի վերաբերյալ, ինչպես նաև ստանալ խորհրդատվություն կամ օգնություն Ծառայությունների վերաբերյալ Օրանժի վաճառքի և սպասարկման կետերում, գրավոր կամ էլեկտրոնային փոստով դիմելով հաճախորդների սպասարկման կետերին կամ գանգահարելով Օրանժի կողմից սահմանված հեռախոսահամար(ներ)ով:

6. Ծառայությունների մատուցում

6.1. Օրանժը Ծառայությունները մատուցում է ՀՀ օրենսդրությանը, Օրանժի տրամադրված լիցենզիային և թույլտվություններին, Բաժանորդային Պայմանագրին և Օրանժի ներքին ընթացակարգերին և քաղաքականությանը համապատասխան:

6.2. Անհրաժեշտության դեպքում Ծառայություններին հասանելիությունն ապահովելու համար Օրանժը Ձեզ հատկացնում է Հեռախոսահամար և տրամադրում SIM Քարտ: SIM Քարտին հասանելիությունն ավելի ապահով է, եթե իրականացվում է PIN կոդի միջոցով: Բացառությամբ Օրանժի կողմից սահմանված դեպքերի կամ Օրանժի և Ձեր միջև ձեռքբերված պայմանավորվածության, Դուք իրավունք չունեք պահանջել որևէ կոնկրետ Հեռախոսահամար: Կոնկրետ Հեռախոսահամարի տրամադրման դեպքում Օրանժը կարող է սահմանել լրացուցիչ վարձատրություն կամ այլ լրացուցիչ պարտավորություններ:

6.3. Ծառայությունները Ձեզ կարող են մատուցվել, եթե պայմանագրային և տեխնիկական բոլոր պահանջները Ձեր կողմից կատարվել են: Սույնով Դուք համաձայն եք, որ Ծառայությունները մատուցվում են Օրանժի Ցանցի առկա տեխնիկական հնարավորություններին և թողունակությանը, Ցանցի Ծածկույթին, օգտագործվող սարքավորման հնարավորություններին ու առանձնահատկություններին համապատասխան և դրանց սահմանում: Օրանժի Ցանցի տեխնիկական հնարավորությունների, Ցանցի Ծածկույթի և դրա թարմացումների մասին տեղեկությունները Բաժանորդին հասանելի են դարձվում Օրանժի վեբ կայքի, վաճառքի և սպասարկման կետերի միջոցով կամ այլ ձևերով:

6.4. Ձեր կողմից Ծառայությունից օգտվելը Ցանցի Ծածկույթի սահմաններում սահմանափակված չէ կոնկրետ տարածքով, եթե այլ բան չի սահմանվում Օրանժի կողմից կամ բխում Ծառայությունների էությունից:

6.5. Դուք համաձայն եք և ընդունում եք, որ Ծառայությունների որակը կախված է ոչ միայն Օրանժից և Օրանժի Ցանցից, այլ նաև այնպիսի հանգամանքներից և սարքավորումներից, որոնց նկատմամբ Օրանժը հսկողություն չունի:

6.6. Օրանժը չի երաշխավորում, որ Ծառայությունների մատուցման ընթացքում ընդհատումներ, սահմանափակումներ, տատանումներ կամ այլ խափանումներ չեն լինի, հատկապես ֆորս-մաժորային (ջրհեղեղներ, երկրաշարժեր, պատերազմ, պետական մարմինների որոշումներ, էլեկտրասնուցման խափանումներ, համաճարակներ և այլն), ցանցային կամ կայանի վթարների կամ անսարքությունների և Օրանժի վերահսկողության ներքո չգտնվող իրավիճակների ու իրադարձությունների դեպքում: Բաժանորդին մատուցվող Ծառայությունների որակը կախված է նաև այլ օպերատորների, այդ թվում՝ միջազգային օպերատորների ցանցերի և սարքավորումների որակից, առանձնահատկություններից և հնարավորություններից և նրանց ցանցում առկա սահմանափակումներից, վթարներից, անսարքություններից և ևմանափայ այլ հանգամանքներից, որոնք դուրս են Օրանժի վերահսկողությունից: Օրանժը պատասխանատվություն չի կրում սույն կետում սահմանված պատճառներով կամ հանգամանքների հետևանքով Ծառայությունները չմատուցելու կամ ոչ պատշաճ մատուցելու համար:

6.7. Դուք համաձայնում և ընդունում եք, որ Օրանժը ձեռնարկում է հնարավոր ողջամիտ միջոցներն ապահովելու համար Ծառայությունների պատշաճ և շարունակական մատուցումը և Բաժանորդի հասանելիությունը Ծառայությանը և Օրանժի Ցանցին, սակայն Ծառայությունների պատշաճ և շարունակական մատուցումն ապահովելու Օրանժի պարտականությունը լավագույն ջանքերը գործադրելու պարտականություն է (best effort) և Ծառայությունները տրամադրվում են «այնպես, ինչպես որ կա» սկզբունքով:

6.8. Հաշվի առնելով Ձեզ մատուցվող Ծառայության բնույթը և կիրառվող տեխնոլոգիաների առանձնահատկությունները՝ Դուք համաձայնում և ընդունում եք, որ Ծառայություններից օգտվելու և/կամ դրանց հասանելիություն ունենալու հնարավորությունը կամ Ծառայությունների որակը կարող է կախված լինել որոշակի հանգամանքներից և գործոններից, որոնք կարող են առաջացնել Ձեզ մատուցվող Ծառայության ընդհատումներ, որակի վատացումներ, կապի արագության տատանումներ կամ այլ խափանումներ: Այդպիսի հանգամանքներ և գործոններ կարող են լինել եղանակային պայմանները և մթնոլորտային երևույթները, ռադիոհաճախականությունների էլեկտրամագնիսական խանգարումները, ռադիոալիքների հասանելիությունը սահմանափակող գործոնների ազդեցությունը, Օրանժի կայանի և սարքավորումների և Ձեր սարքավորման (հեռախոս, մոդեմ և Ծառայություններից օգտվելու համար օգտագործվող այլ սարքավորումներ) միջև եղած հեռավորությունը, եղանակային պայմանները, տեղական ռելիեֆի առանձնահատկությունները, ռադիոալիքների տարածումը և խափանումների այլ աղբյուրների գոյությունը, ինտերֆերենցիաները, հանգամանքներ, որոնք խոչընդոտներ են ստեղծում ռադիոսարքավորումների նորմալ գործունեության համար և այլն, Ձեր սարքավորման տեխնիկական հնարավորությունները և առանձնահատկությունները, Ծառայություններից օգտվելու վայրը (ծածկույթից դուրս տարածք, ստորգետնյա տարածքներ, շենքերին մոտ լինելը, թունելները, նկուղները և այլ ստորգետնյա տարածքները) և ժամանակը (Օրանժի Ցանցի առավել ծանրաբեռնված ժամեր, միաժամանակ օգտագործողների թիվը սպասարկման տվյալ վայրում): Ծառայության ընդհատումները, որակի վատացումները, կապի արագության տատանումները կամ այլ խափանումները կարող են առաջանալ նաև ոչ բարենպաստ աշխատանքային միջավայրից (խոնավության աստիճան, սարքավորման



բնականոն աշխատանքի համար չնախատեսված շատ բարձր կամ ցածր ջերմաստիճան և այլն), Ձեր սարքավորման որակից, տեխնիկական անսարքությունից կամ սխալ կարգաբերումներից (Ձեզ մատուցվող Ծառայության հետ անհամատեղելի օպերացիոն համակարգեր, վիրուսներ և այլն) և այլ հանգամանքներից, որոնք դուրս են Օրանժի վերահսկողությունից: Օրանժը պատասխանատվություն չի կրում Ծառայությունները չմատուցելու կամ ոչ պատշաճ մատուցելու համար, եթե դա սույն կետով սահմանված հանգամանքների և գործոնների և այլ նման իրադարձությունների և հանգամանքների արդյունք/հետևանք է:

6.9. Ծառայությունների պատշաճ և շարունակական մատուցումն ապահովելու համար Օրանժի կողմից իրականացվում են Օրանժի Ցանցի վերազինման, վերականգնման, վերանորոգման, թարմացման, ընդլայնման, փոխարինման, պահպանման, ամրապնդման, վերադասավորման, վթարների, թերությունների և անսարքությունների վերացման կամ այլ նմանատիպ աշխատանքներ (**Պահպանման Աշխատանքներ**): Պահպանման Աշխատանքների իրականացման հետևանքով կարող են առաջանալ Ծառայության ընդհատումներ, սահմանափակումներ, որակի վատացումներ, կապի արագության տատանումներ կամ այլ խափանումներ, որոնց համար Օրանժը պատասխանատվություն չի կրում:

6.10. Օրանժը ողջամիտ ջանքեր կգործադրի հնարավորիս նվազագույնի հասցնելու Պահպանման Աշխատանքների հետևանքով առաջացած խափանումները:

6.11. Օրանժը չի երաշխավորում՝

6.11.1. այնպիսի հանգույցների կամ սերվերների հետ տեղեկատվության փոխանակումը, որոնք ժամանակավոր կամ մշտապես անհասանելի են ինտերնետային ցանցի միջոցով,

6.11.2. Ծառայությունների մատուցման ընթացքում ընդհատումների, սխալների, արագության և որակի անկումների, տատանումների և այլ խափանումների ու խաթարումների բացակայությունը, ինչպես նաև Ծառայության հասանելիության անընդհատությունը,

6.11.3. Օրանժի Ցանցի հետ հասանելիության հաստատումը՝ նախապես հայտարարված տեսական կամ միջին արագության առավելագույն հնարավորությամբ:

6.12. Օրանժի Ցանցի անխափան աշխատանքն, անվտանգությունն ու Ծառայության որակն ապահովելու, Օրանժի Ցանցի հնարավորությունները հավասարաչափ բաշխելու, խցանումները նվազեցնելու համար, ինչպես նաև ապահովելու համար բոլոր Բաժանորդների հասանելիությունը Ծառայություններին Օրանժն ինքն է սահմանում անհրաժեշտ տեխնիկական միջոցները, այդ թվում՝ Օրանժն իրավունք ունի իր հայեցողությամբ ձեռնարկել իրավիճակին համապատասխան միջոցառումներ, կիրառել Ծառայությունների ծավալի սահմանափակումներ և սահմանել առաջնահերթություններ:

7. Ծառայություններից օգտվելը

7.1. Դուք պարտավոր եք Ծառայություններից օգտվել ՀՀ օրենսդրությանը, Բաժանորդային Պայմանագրին և Օրանժի կողմից սահմանված այլ կանոններին և պայմաններին համապատասխան՝ առանց խախտելու Օրանժի, այլ Բաժանորդների և երրորդ անձանց իրավունքներն ու շահերը: Այլ օպերատորների ցանցի միջոցով Ծառայություններից օգտվելիս Դուք պարտավոր եք պահպանել այդ օպերատորների կողմից սահմանված կանոնները, չափանիշները և սահմանափակումները:

7.2. Ձեր կողմից օգտագործվող սարքավորումը պետք է լինի հավաստագրված, Օրանժի Ցանցի, Ծառայությունների ու

SIM Քարտի հետ համատեղելի և համապատասխանի ՀՀ օրենսդրության պահանջներին: Դուք իրավունք չունեք Ծառայությունից օգտվել որևէ եղանակով, որը կարող է ազդել էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի կամ սարքավորումների ապահով և անխափան աշխատանքի վրա:

7.3. Օրանժը պատասխանատվություն չի կրում, եթե Դուք ոչ պատշաճ կամ անօրինական կերպով եք օգտվում Ծառայություններից: Սույն Պայմանների խախտմամբ Ծառայություններն օգտագործելու դեպքում երրորդ անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում եք Դուք:

7.4. Դուք Ծառայություններից օգտվում եք Ձեր սեփական ռիսկով: Օրանժը չի կարող որոշել Ծառայությունների համապատասխանությունը Ձեր կարիքներին:

7.5. Հանդիսանալով վերջնական օգտագործող՝ Դուք իրավասու չեք Ծառայությունները օգտագործել առևտրային, Ծառայությունները երրորդ անձանց առաջարկելու, էլեկտրոնային հեռահաղորդակցության ծառայություններ մատուցելու, գովազդային, տեղեկատվական կամ այլ բնույթի գանգվածային հաղորդագրություններ ուղարկելու, քվեարկություն, վիկտորինաներ, հարցումներ, մրցույթներ, հետազոտություններ, աճուրդներ, վիճակախաղեր, արշավներ անցկացնելու և նմանատիպ այնպիսի գործողություններ կատարելու նպատակով, որոնք ուղղված են շահույթի ստացմանը կամ գաղափարների տարածմանը՝ առանց Օրանժի նախնական գրավոր համաձայնության:

7.6. Արգելվում է Օրանժի Ցանցով այնպիսի Տրաֆիկի ուղղորդումը, որը գեներացվել է երրորդ անձանց կողմից:

7.7. Դուք պարտավոր եք չօգտագործել Ծառայությունները այլ օպերատորներից և ցանցերից ելքային Տրաֆիկի փոխանցում իրականացնելու համար, ինչպես նաև այնպիսի նպատակներով, որոնք հակասում են պետության շահերին, բարոյականության համընդհանուր նորմերին և հասարակական կարգին:

8. SIM Քարտեր և սարքավորում

8.1. Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ սարքավորումը ձեռք է բերվում Ձեր կողմից՝ Ձեր հաշվին և հայեցողությամբ և Դուք եք պատասխանատու դրա տեղակայման, կարգաբերումների և պատշաճ աշխատանքի համար, եթե այլ բան չի սահմանվում Օրանժի կողմից:

8.2. Որոշ Ծառայությունների (օր.՝ շարժական ինտերնետի ծառայություններ) դեպքում Օրանժը կարող է առաջարկել սարքավորումներ, որոնք կարող են ձեռքբերվել Օրանժից՝ իրենց ամբողջ արժեքով կամ Օրանժի խթանիչ առաջարկով նախատեսված պայմանական հատուկ ցածր գնով կամ այլ արտոնյալ պայմաններով՝ որոշակի ժամկետում Օրանժի Բաժանորդը մնալու պարտավորությամբ կամ Օրանժի կողմից սահմանված այլ լրացուցիչ պարտավորությամբ: Օրանժը կարող է նաև առաջարկել սարքավորումներ օգտագործման/տիրապետման իրավունքով կամ այլ հիմունքներով՝ Օրանժի կողմից սահմանված պայմաններով: Օրանժն իրավունք ունի սահմանելու հատուկ պայմաններ իր կողմից առաջարկվող սարքավորումների համար:

8.3. Օրանժի կողմից սարքավորման տրամադրման դեպքում սեփականության իրավունքը փոխանցվում է Ձեզ Բաժանորդային Պայմանագրում սահմանված պայմաններով և ժամկետում, իսկ սարքավորման հետ կապված ռիսկերը, այդ թվում՝ վնասման, կորստի, ոչ լիազորված օգտագործման և հափշտակության ռիսկը, Ձեզ են փոխանցվում սարքավորումը Ձեզ հանձնելու պահից: Սարքավորումը Ձեզ հանձնելու պահից Դուք եք պատասխանատու նաև սարքավորման բնական մաշվածության համար: Եթե սարքավորումը սեփականության իրավունքով Ձեզ չի պատկանում, Դուք իրավասու չեք այլ անձի



զիջել, վաճառել, վարձակալության տալ կամ որևէ այլ կերպ փոխանցել այն կամ որևէ փոփոխություն կատարել դրանում և պարտավոր եք սարքավորման վնասման, կորստի կամ հափշտակության դեպքում Օրանժին վճարել դրա արժեքը անմիջապես, բայց ոչ ուշ քան Օրանժի կողմից նման պահանջ ներկայացնելու պահից 10 օրվա ընթացքում:

8.4. Դուք պարտավոր եք Օրանժի կողմից տրամադրված սարքավորումը օգտագործել Օրանժի, արտադրողի կողմից կամ այլ կերպ սարքավորմանը ներկայացվող պահանջներին և շահագործման կանոններին համապատասխան: Օրանժի կողմից առաջարկվող սարքավորման համար կարող է տրամադրվել արտադրողի երաշխիք՝ սարքավորմանը կից տրամադրվող փաստաթղթերին համապատասխան:

8.5. Օրանժի կողմից առաջարկվող սարքավորումը համատեղելի է միայն Ծառայությունների և Օրանժի SIM Քարտերի հետ, եթե այլ բան չի սահմանվում Օրանժի կողմից:

8.6. Օրանժը հանդիսանում է Ձեզ տրամադրվող SIM Քարտի միակ սեփականատերը, բացառությամբ դրա վրա գտնվող Ձեր սեփականությունը հանդիսացող տեղեկատվության: SIM քարտը Ձեզ հանձնելու պահից Ձեզ են անցնում դրա վնասման, բնականոն մաշվածության, կորստի, հափշտակության և ոչ լիազորված օգտագործման ռիսկերը: Օրանժը պարտավոր է անվճար փոխարինել Օրանժից ձեռքբերված ցանկացած SIM Քարտ, որը ճանաչվել է խտտանված դիզայնի կամ արտադրական թերության պատճառով: Մնացած դեպքերում Օրանժը կարող է SIM Քարտի փոխարինման համար Ձեզից հավելյալ վճար գանձել:

8.7. Դուք իրավասու չեք այլ անձի զիջել, վաճառել, վարձակալության տալ կամ այլ կերպ փոխանցել կամ ոչնչացնել SIM Քարտը:

8.8. SIM Քարտի վրա գրանցված նույնականացնող տեխնիկական տվյալները կրկնօրինակելու ցանկացած փորձ արգելվում է, և Դուք պատասխանատվություն եք կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.9. SIM Քարտի հետ պետք է վարվել խնամքով և այն պահպանել ըստ դրա շահագործման կանոնների:

8.10. Դուք պարտավոր եք գերծ մնալ SIM Քարտի և Օրանժի տրամադրած սարքավորման ոչ պատշաճ, անօրինական և չարաշահումներով օգտագործումից և թույլ չտալ դրա օգտագործումը չլիազորված անձանց կողմից:

8.11. Օրանժը չի կրում որևէ պատասխանատվություն Օրանժից ձեռքբերված սարքավորման կամ SIM Քարտի միջոցով Ձեզ պատճառված վնասի համար, ինչպես նաև Ձեր և այլ անձանց կողմից սարքավորմանը կամ SIM Քարտին պատճառած վնասի համար:

8.12. SIM Քարտի կամ Օրանժի կողմից տրամադրված սարքավորման կորստի կամ հափշտակության դեպքում, Դուք պարտավոր եք Օրանժին անհապաղ տեղեկացնել այդ մասին՝ ներկայացնելով համապատասխան գրավոր ծանուցում կամ զանգահարելով Օրանժի հաճախորդների սպասարկման կենտրոն և ներկայացնելով Օրանժի կողմից պահանջվող փաստաթղթերը:

8.13. Դուք պատասխանատվություն եք կրում երրորդ անձանց կողմից Ձեր SIM Քարտի, Հեռախոսահամարի կամ սարքավորման միջոցով Ծառայությունների ցանկացած օգտագործման համար: SIM Քարտի և Օրանժի կողմից տրամադրված սարքավորման տիրապետողը կհամարվի դրա լիազորված օգտագործողը, իսկ իրականացված գործողությունները կհամարվեն կատարված Ձեր անունից և ի շահ Ձեզ և նման օգտագործման հետևանքով առաջացած բոլոր պարտքերը և դրանք մարելու պարտավորությունը կկրեք Դուք մինչև Ձեր կողմից SIM Քարտի կամ սարքավորման կորստի կամ հափշտակության մասին Օրանժին սահմանված

կարգով տեղեկացնելը և Ձեր պահանջով Ծառայությունների կասեցումը, որը բավարարվում է Օրանժի կողմից 24 ժամվա ընթացքում: Օրանժն իրավասու է մինչև Ձեր պահանջի կատարումը ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Ձեր անձը ճշտելու համար: Օրանժը պատասխանատվություն չի կրում չլիազորված անձի կողմից ներկայացվող նմանատիպ պահանջների և դրանց կատարման համար:

8.14. Դուք իրավասու չեք օգտագործել SIM Քարտը և Օրանժի կողմից տրամադրված սարքավորումը անհամատեղելի սարքավորման հետ կամ այնպիսի սարքավորման հետ, որը նախատեսված չէ նման օգտագործման համար կամ օգտագործել այն որևէ այլ կերպ, որը կարող է վնաս հասցնել Օրանժի Ցանցին կամ Օրանժի ցանկացած այլ սարքավորմանը կամ ազդել դրանց գործառնության վրա:

8.15. Օրանժն իրավասու է Բաժանորդային Պայմանագրի լուծման պահից կամ իր կողմից սահմանված այլ ժամկետում SIM Քարտը և դրան ամրակցված Հեռախոսահամարը տրամադրել այլ անձի: Տեխնիկական անհրաժեշտությունից ելնելով և այլ դեպքերում Օրանժն իրավունք ունի փոփոխելու տրամադրված Հեռախոսահամարը կամ SIM Քարտը՝ այդ մասին ծանուցելով Ձեզ:

8.16. Դուք պարտավոր եք վերադարձնել SIM Քարտը Օրանժից այդպիսի պահանջ ստանալու դեպքում և այդ մասին ծանուցումը ստանալու պահից գերծ մնալ այն օգտագործելուց, մասնավորապես, երբ այդպիսի պահանջը Օրանժի կողմից ներկայացվում է Օրանժի Ցանցի անվտանգ օգտագործման նկատառումներից ելնելով կամ կապված է Բաժանորդային Պայմանագրի լուծման հետ, անկախ դրա լուծման պատճառներից:

9. Գներ և Գանձումներ

9.1. Ծառայությունների նկատմամբ կիրառվող գները բաժանորդագրման պահին Գնացուցակում և Սակագնային Պլանով Օրանժի կողմից սահմանված գներն են, որոնք պայմանավորված են Ձեր կողմից ընտրված բաժանորդագրման տեսակով, Սակագնային Պլանով և Ծառայություններով: Օրանժն իրավասու է միակողմանի փոփոխել Ծառայության գները, Սակագնային Պլանը կամ մշակել ու կիրառել նոր գներ և Սակագնային Պլաններ՝ Բաժանորդային Պայմանագրում սահմանված կարգով:

9.2. Օրանժն իրավասու է Ձեզից գանձել տույժեր կամ այլ վճարներ սահմանափակված կամ կասեցված Ծառայությունների վերականգնման և SIM Քարտի վերաակտիվացման համար:

9.3. Ծառայությունների և SIM Քարտի օգտագործման արդյունքում առաջացած ծախսերը կրում եք Դուք:

9.4. Մատուցված Ծառայությունների համար գանձվող գումարները և մատուցված Ծառայությունների ծավալները հաշվարկվում են Օրանժի Բիլինգային Համակարգի կամ այլ օպերատորների և ծառայություն մատուցողների կողմից ներկայացված տվյալներով (օր.՝ ռոումինգում Ծառայություններ մատուցելիս): Եթե առաջանում է վեճ մատուցված Ծառայությունների ծավալի վերաբերյալ, հաշվարկների համար հիմք են ընդունվում Օրանժի, իսկ որոշ Ծառայությունների դեպքում՝ այլ օպերատորների և ծառայություն մատուցողների կողմից ներկայացված տվյալները:

9.5. Շարժական հեռախոսակապի ծառայությունների դիմաց գանձում և իրականացվում է՝ ելնելով հեռախոսային զանգի տևողությունից, Ձեր կողմից կատարված հարցումների քանակից, ակտիվացված և/կամ օգտագործված Ծառայությունների քանակից, ընդունված, փոխանցված, ուղարկված, մշակված և/կամ պահպանված տեղեկատվության քանակից և/կամ ծավալից՝ ըստ



սակագնային/տարիֆիկացման միավորի, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և/կամ Օրանժի կողմից սահմանված այլ պարամետրերով:

9.6. Հեռախոսային զանգի տևողության հաշվարկն իրականացվում է կանչվող անձի պատասխանելու առաջին վայրկյանից մինչև զանգող կամ կանչվող անձի կողմից անջատումը կամ Ձեր սարքավորման անջատվելը, եթե այլ բան չի սահմանվում Օրանժի կողմից որոշ Ծառայությունների համար: Հեռախոսային զանգը համարվում է պատասխանված և հեռախոսային զանգի տևողության հաշվարկը և համապատասխան գանձումներն իրականացվում են նաև հետևյալ սարքավորումների պատասխանի/ազդանշանի դեպքերում՝

9.6.1. Ֆյակների փոխանցման սարքավորում, օրինակ՝ մոդեմ, ֆաքսիմիլային ապարատ և այլ սարքավորում, որոնք աշխատում են տեղեկատվության ավտոմատ ընդունման ռեժիմում,

9.6.2. Բաժանորդի սարքավորում, ինքնապատասխանիչ, ձայնային փոստ,

9.6.3. Բաժանորդի այլ սարքավորում, որն ապահովում կամ նմանարկում է տվյալների փոխանցման հնարավորություն կանչվող անձի բացակայության դեպքում:

9.7. Շարժական ինտերնետի ծառայության դեպքում գանձումն իրականացվում է Ձեր ընտրած Սակագնային Պլանին համապատասխան ամսավճարի կամ օրավճարի չափով՝ առանց գանձումներ կատարելու: Ձեր կողմից փաստացի օգտագործած յուրաքանչյուր բայթի դիմաց կամ ըստ օգտագործված բայթերի և Տրաֆիկի, եթե այլ բան չի սահմանվում համապատասխան Սակագնային Պլանով:

9.8. Հաշվի առնելով ցանցի աշխատանքի տեխնիկական առանձնահատկությունները, Օրանժն իրավունք ունի սահմանել մեկ չընդհատվող կամ ակտիվացված, սակայն չօգտագործվող կապի առավելագույն տևողություն:

9.9. Մի շարք Ծառայությունների (ռոումինգ ծառայություն, միջազգային ելքային ծառայություններ և այլն) հետ կապված տեղեկատվության փոխանակման ընթացակարգի տեխնիկական առանձնահատկությունները հաշվի առնելով, հաշվարկների ու գանձումների վերաբերյալ տվյալները կարող են ստացվել ուշացումով:

9.10. Օրանժը կարող է սահմանել մատուցված Ծառայության հաշվարկի և գանձում իրականացնելու այլ պայմաններ:

10. Կճարման կարգ և վճարումներ

10.1. Ըստ բաժանորդագրման տեսակի, Ծառայությունների ցանկի և Սակագնային Պլանի՝ Ծառայությունների համար սահմանվում է կանխավճար, ամսական բաժանորդագրության վճար (ամսավճար), դեպոզիտ, հետվճարում, գումարային սահմանաչափ, բանկային երաշխիք կամ այլ վճարման կարգեր ու պարտավորության ապահովման միջոցներ: Ծառայության համար վճարումը մասամբ կամ ամբողջությամբ ուշացնելու, չկատարելու կամ Օրանժի նկատմամբ այլ չկատարված ֆինանսական պարտավորությունների դեպքում, Օրանժն իրավունք ունի նվազեցնել պարտքի գումարը բանկային երաշխիքի, դեպոզիտի կամ կանխավճարի գումարից:

10.2. Բաժանորդագրման վճարի (ամսավճար) չափը կարող է լինել հաստատված կայուն գումար կամ կախված լինել Բաժանորդի Հաշվի ներքո ակտիվացված հեռախոսագծերի կամ Հեռախոսահամարների քանակից: Ըստ Ծառայության առաջարկի և Սակագնային Պլանի բաժանորդագրման վճարը (ամսավճարը) կարող է նվազեցվել կամ չնվազեցվել օգտագործված Ծառայությունների դիմաց:

10.3. Բաժանորդագրման վճարը (ամսավճարը) ենթակա է հաշվարկման և գանձման Ծառայության ակտիվացման պահից

մինչև Ծառայության ամբողջական կասեցումը, եթե այլ բան չի սահմանվում Օրանժի կողմից: Դուք պարտավոր եք բաժանորդագրման վճարը (ամսավճարը) վճարել նաև այն դեպքում, եթե Ծառայությունից չեք օգտվել դրա կարիքը չունենալու, Ձեր բնակության վայրից բացակայելու կամ այլ պատճառով, եթե չեք լուծել Բաժանորդային Պայմանագիրը՝ Բաժանորդային Պայմանագրով և օրենքով սահմանված կարգով:

10.4. Բիլինգն իրականացվում է ամսվա մեջ մեկ օր: Ըստ Ծառայության Առաջարկի և Սակագնային Պլանի Բիլինգի Օրը կարող է լինել յուրաքանչյուր ամսվա վերջին օրը, Օրանժի կողմից սահմանված այլ օր կամ յուրաքանչյուր Բաժանորդի համար Ծառայության ակտիվացման ամսաթվին համապատասխանող յուրաքանչյուր ամսվա նույն օրը: Կերջին դեպքում, երբ Ծառայությունների ակտիվացումն իրականացվում է ամսվա 29-ից 31-ը ընկած ժամանակահատվածում, Բիլինգի Օր է համարվում յուրաքանչյուր ամսվա 28-ը:

10.5. Օրանժն իրավասու է իր բացառիկ հայեցողությամբ սահմանել Ծառայություններից օգտվելու գումարային սահմանաչափ (առավելագույն բացասական Հաշվեկշիռը, որի սահմաններում Դուք կարող եք օգտվել Ծառայություններից, բացառությամբ Օրանժի կողմից սահմանված դեպքերի) և օգտագործման վերաբերյալ այլ սահմանափակումներ: Գումարային սահմանաչափը ըստ ընտրված Սակագնային Պլանի, Ծառայությունների ցանկի և ծավալի սահմանվում և փոփոխվում է՝ հաշվի առնելով վճարումներ կատարելու Ձեր պատմությունը, Ձեր վարկային պատմությունը, վճարունակությունը, Ձեր գործունեության ծավալները և շրջանառությունը, հուսալիությունը և նմանատիպ այլ հանգամանքներ:

10.6. Ամսվա ընթացքում գումարային սահմանաչափին հասնելու դեպքում Բաժանորդը կարող է շարունակել օգտվել Օրանժի Ծառայություններից՝ առկա պարտքը ամբողջությամբ վճարելու, ինչպես նաև լրացուցիչ լիցքավորում կատարելու դեպքում, բացառությամբ Օրանժի կողմից սահմանված դեպքերի:

10.7. Պահպանման Աշխատանքների իրականացման ընթացքում Բաժանորդների օգտագործած Ծառայությունների դիմաց գանձումները, այդ թվում՝ ռոումինգում գտնվելիս, Բիլինգային Համակարգի կողմից չեն գրանցվում իրական ռեժիմում և ամսական բաժանորդագրությամբ, հետվճարային ու հետվճարային ամսական բաժանորդագրությամբ համակարգի Բաժանորդները կարող են գերազանցել իրենց գումարային սահմանաչափը, իսկ կանխավճարային համակարգի Բաժանորդները՝ կարող են ծախսել ավելին, քան իրենց փաստացի Հաշվեկշիռը: Նման դեպքերում Հաշիվը ստուգելիս Բաժանորդները չեն կարող տեսնել Հաշվեկշիռի վերջին թարմացումները, իսկ օգտագործված Ծառայությունների դիմաց գանձումներն իրականացվում են ուշացումով: Սույն կետում նշված դեպքերում Բաժանորդն է պատասխանատվություն կրում Պահպանման Աշխատանքների իրականացման ընթացքում օգտագործված Ծառայությունների դիմաց առաջացած բոլոր պարտքերի վճարման համար, այդ թվում՝ գումարային սահմանաչափը կամ փաստացի Հաշվեկշիռը գերազանցելու հետևանքով գոյացած պարտքի վճարման համար:

10.8. Կանխավճարային համակարգ.

10.8.1. Դուք իրավունք ունեք օգտվել Ծառայություններից Ձեր Հաշվեկշիռի և Օրանժի կողմից սահմանված ժամկետի սահմաններում: Մատուցված Ծառայությունների դիմաց գանձումներն ուղղակիորեն նվազեցվում են Ձեր Հաշվեկշիռից: Հեռախոսահամարն ակտիվ պահպանելու համար Դուք



պարտավոր եք կատարել կանխավճարներ՝ Օրանժի կողմից սահմանված կարգով և պայմաններով, որը ձևավորում է Բաժանորդի Հաշվի վրա դրական մնացորդ: Կանխավճարի չափն ընտրում եք Դուք՝ հաշվի առնելով Ծառայություններից օգտվելու նախատեսվող ծավալը, Սակագնային Պլանը և Օրանժի կողմից սահմանված այլ պայմանները: Կատարված կանխավճարի գումարը Օրանժի կողմից սահմանված ժամկետում չօգտագործելու դեպքում, Օրանժն իրավունք ունի իր հայեցողությամբ և առանց ծանուցման գրոյացնել Ձեր Հաշվեկշիռը:

10.9. Ամսական բաժանորդագրությամբ համակարգ.

10.9.1. Ամսական բաժանորդագրությամբ համակարգի դեպքում սահմանվում է ամսական բաժանորդագրության վճար (ամսավճար), որը համարվում է Բաժանորդի կողմից մինչև հաջորդ Բիլինգի օրը Ծառայությունից օգտվելու թույլտվություն:

10.9.2. Ամսական բաժանորդագրությամբ համակարգի դեպքում կարող է նախատեսվել Ծառայություններին բաժանորդագրման ժամանակ վճարվող կանխավճար, որը ըստ Ծառայության առաջարկի կամ Սակագնային Պլանի կամ Ծառայության կարող է նվազեցվել հաջորդող ամսվա համար վճարման ենթակա գումարից կամ չնվազեցվել:

10.9.3. Եթե Դուք արդեն ունեք առնվազն 1 (մեկ) ամսվա չվճարված պարտք, ապա Ձեզ մատուցվող Ծառայությունը կրկին ակտիվացնելու և Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ կլինի ամբողջությամբ վճարել անցած ամսվա (ամիսների) չվճարված պարտքը և ընթացիկ ամսվա ամսավճարը: Վճարովի Ծառայություններ ակտիվացնելու դեպքում գանձումը կատարվում է Սակագնային Պլանին համարժեք ամսավճարի հետ միասին և նույն կանոններով կամ Ձեր կողմից կատարված կանխավճարից, եթե այլ բան չի սահմանվում Օրանժի կողմից:

10.9.4. Ամսական բաժանորդագրությամբ համակարգի դեպքում վճարումը կատարվում է ամսական՝ Բիլինգի Օրվանից հաշվարկված այն ժամանակահատվածի ընթացքում կամ այն օրը, որը սահմանված է Ձեր Բաժանորդային Պայմանագրում կամ Ձեզ ներկայացվող հաշվում: Ընդ որում՝ յուրաքանչյուր ամիս վճարվում է տվյալ ամսվա ամսավճարը և նախորդ ամսվա բացասական Հաշվեկշիռը, եթե առկա է:

10.10. Հետվճարային և հետվճարային ամսական բաժանորդագրությամբ համակարգ.

10.10.1. Հետվճարային և հետվճարային ամսական բաժանորդագրությամբ համակարգի դեպքում Դուք վճարումը կատարում եք հաշվետու ամսվա ընթացքում Ծառայությունները ստանալուց հետո՝ համաձայն Բաժանորդային Պայմանագրի: Վճարումը կատարվում է համաձայն օգտագործված Ծառայությունների քանակի և ծավալի և ընտրված Սակագնային Պլանի:

10.10.2. Հետվճարային և հետվճարային ամսական բաժանորդագրությամբ համակարգի դեպքում Դուք պարտավոր եք վճարումները կատարել Ձեր Բաժանորդային Պայմանագրում կամ Ձեզ ներկայացվող հաշվում սահմանված ժամկետում: Ընդ որում՝ յուրաքանչյուր ամիս վճարվում է նախորդ ամսվա ամսավճարը, եթե այն նախատեսված է և նախորդ ամսվա բացասական Հաշվեկշիռը:

10.10.3. Հետվճարային և հետվճարային ամսական բաժանորդագրությամբ համակարգի դեպքում Բաժանորդ իրավաբանական անձինք Օրանժի առջև պատասխանատվություն են կրում Բաժանորդի Հաշվի ներքո ակտիվացված հեռախոսագիծ օգտագործողների և նրանց պարտքերի համար, եթե այլ բան չի սահմանվում Օրանժի կողմից: Բաժանորդ իրավաբանական անձինք Օրանժի առջև պատասխանատվություն են կրում Բաժանորդի Հաշվի ներքո ակտիվացված հեռախոսագիծ օգտագործողների համար

անկախ նրանցից համապատասխան Հեռախոսահամարների միջոցով օգտագործված Ծառայությունների դիմաց վճարների հավաքագրման փաստից: Օրանժը որևէ պատասխանատվություն չի կրում այդպիսի հավաքագրման համար:

10.11. Ձեր կողմից Օրանժի սահմանված գումարային սահմանաչափին հասնելու դեպքում Օրանժն իրավասու է սահմանափակել կամ կասեցնել Ծառայությունների մատուցումը և/կամ արտահերթ հաշիվ ներկայացնել փաստացի մատուցված Ծառայությունների համար, որը պետք է վճարվի հաշվում նշված ժամկետում:

10.12. Ըստ Ծառայության առաջարկի Դուք կարող եք վճարումն իրականացնել կանխիկ դրամով, վերալիցքավորման քարտի, բանկային փոխանցման, տերմինալների, բանկային վճարային քարտերի, առցանց և/կամ Օրանժի կողմից ընդունելի այլ միջոցներով: Օրանժը պատասխանատվություն չի կրում վճարումներն ընդունող միջնորդի կողմից սահմանված կանոնների համաձայն որևէ լրացուցիչ միջնորդավճարի գանձման համար:

10.13. Եթե Ձեր և Օրանժի միջև կնքվել են մի քանի Բաժանորդային Պայմանագրեր կամ նույն Բաժանորդային Պայմանագրով տրամադրվել են մի քանի Հաշիվ կամ Հեռախոսահամարներ, Օրանժն իրավունք ունի հաշվանցել կամ ուղարկել մեկ Բաժանորդային Պայմանագրի, Հաշվի կամ Հեռախոսահամարի համար ստացված և չօգտագործված դրամական միջոցները Բաժանորդի մեկ այլ Բաժանորդային Պայմանագրով, Հաշվով կամ Հեռախոսահամարով գոյացած պարտքը մարելու համար: Այդ դեպքում Բաժանորդի Հաշվին պահպանվում է այն գումարը, որը մնացել է պարտքերի ամբողջական մարումից հետո: Տեղի ունեցած հաշվանցման մասին տեղեկատվությունը ներկայացվում է Բաժանորդին տրվող հաշվում:

10.14. Ձեր պահանջով Օրանժը կտրամադրի Բաժանորդի Հաշվի վերծանում (ոչ ավել, քան համապատասխան պահանջը ստանալու պահին նախորդող 3 ամիսների համար) մատուցված Ծառայությունների վերաբերյալ, որոնց համար Օրանժն իրավասու է վճարումներ գանձել՝ Օրանժի կողմից սահմանված կարգով:

10.15. Ձեզ հնարավորություն է ընձեռնվում էլեկտրոնային կամ Օրանժի կողմից Ձեզ հասանելի դարձված այլ եղանակներով ստուգելու Ձեր Հաշվեկշիռը, Ձեզ մատուցվող Ծառայության և Հեռախոսահամարի կարգավիճակը:

10.16. Բացառությամբ կանխավճարային վճարային համակարգի, մնացած վճարային համակարգերի դեպքերում յուրաքանչյուր ամսվա Ձեր հաշիվը պատրաստվում և փոխանցվում է Օրանժի վաճառքի և սպասարկման կետեր՝ Բիլինգի Օրվանից 7 օրվա ընթացքում, եթե այլ բան չի սահմանվում Օրանժի կողմից: Ձեր ընտրությամբ հաշիվը կարող է ուղարկվել էլեկտրոնային փոստով կամ փոստային առաքման ծառայության միջոցով: Օրանժն իրավունք ունի փոստային առաքումների, ինչպես նաև Ձեր հաշվի կրկնօրինակը տրամադրելու համար Ձեզից գանձել վճար: Օրանժի կողմից ներկայացված հաշիվը դիտարկվում է որպես մատուցված Ծառայությունների և դրանց ծավալի ապացույց: Ցանկացած դեպքում, Դուք պարտավոր եք անձամբ ճշտել Ձեր ամսական պարտքը և պատասխանատվություն եք կրում այն ժամանակին վճարելու համար՝ անկախ վճարման միջոցից, հաշիվը ստանալու կամ ներկայացված հաշվի վերաբերյալ որևէ առարկություն ունենալու փաստից: Հաշվի չստանալը կամ ուշացումով ստանալը չի կարող հիմք հանդիսանալ վճարումները չկատարելու կամ վճարման ժամկետները փոփոխելու համար: Դուք կարող եք վիճարկել կամ առարկություններ ներկայացնել Օրանժի կողմից Ձեզ

ներկայացված հաշվի վերաբերյալ մինչև տվյալ հաշվի համար սահմանված վճարման վերջնաժամկետը, հակառակ դեպքում ներկայացված հաշվում սահմանված գումարը համարվում է հաստատված Ձեր կողմից: Հաշվի չվճարումը չի համարվում առարկայային ներկայացում դրա վերաբերյալ: Հաշվի վերաբերյալ Ձեր առարկայությունները կարող են ներկայացվել գրավոր կամ էլեկտրոնային նամակով՝ Օրանժի վաճառքի և սպասարկման ցանկացած կետ կամ հաճախորդների սպասարկման կենտրոն:

10.17. Վճարումը ենթակա է կատարման անկախ Օրանժի կողմից Բաժանորդային Պայմանագրի համաձայն Ծառայությունների մատուցումը ամբողջությամբ կամ մասամբ սահմանափակելու կամ կասեցնելու փաստից:

10.18. Վճարումը համարվում է կատարված Օրանժի Բիլինգային Համակարգ վճարումը մուտք լինելու պահից:

10.19. Ներկայացված հաշվում սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում, իսկ սահմանված ժամկետ չլինելու դեպքում չվճարման հիմքով Օրանժի կողմից Ծառայությունը կասեցնելու օրվանից հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա գումարի 0.01 տոկոսի չափով՝ վճարումն ուշացնելու յուրաքանչյուր օրվա համար:

10.20. Վճարում կատարելիս Դուք պետք է ճշգրիտ նշեք այն Հեռախոսահամարը կամ Հաշվի համարը, որի համար կատարվում է վճարումը: Ցանկացած անձ, որը վճարում է կատարում Ձեր հաշվին, համարվելու է Ձեր կողմից պատշաճ լիազորված և Ձեր անունից գործող: Սույնով Դուք անվերապահորեն տալիս եք Ձեր համաձայնությունը Օրանժի կողմից ուղղումներ կատարել սխալ վճարումներում, ներառյալ՝ իրականացնել սխալ վճարման փոխանցում Ձեր Հաշվից ճիշտ հասցեատիրոջը: Ձեր կողմից սխալ Հաշվին կատարված ցանկացած վճարում ենթակա է Օրանժի կողմից ուղղման ողջամիտ հնարավորությունների շրջանակում և Օրանժը պատասխանատվություն չի կրում Ձեր կրած վնասների համար: Սխալ փոխանցված գումարը Ձեզ հետ է վերադարձվում այն դեպքում, երբ անձը, որի Հաշվին սխալմամբ փոխանցվել է գումարը, այն չի օգտագործել կամ կրա Հաշվեկշռին առկա է համապատասխան չափով գումար:

10.21. Դուք սույնով համաձայն եք, որ Օրանժի հաշվները պատշաճ չվճարելու դեպքում պարտավոր եք Օրանժի առաջին պահանջով փոխհատուցել Օրանժի բոլոր ծախսերը կապված այդպիսի ուշ վճարումների հավաքագրման հետ, ներառյալ, սակայն չսահմանափակելով իրավաբանական և դատական ծախսերով:

10.22. Դուք սույնով ընդունում և համաձայնում եք, որ Օրանժն իրավասու է իր կողմից սահմանված կարգով առանց որևէ ծանուցման գրոյացնել Ձեր Հաշվեկշռը՝ Ձեր կողմից այն սահմանված ժամկետում չսպառելու դեպքում:

11. Կասեցում, Սահմանափակում

11.1. Օրանժն իրավունք ունի սահմանափակել կամ կասեցնել Ձեզ մատուցվող Ծառայությունները՝ առանց այդ մասին նախնական ծանուցման, եթե այն պարտադիր չէ նմանատիպ սահմանափակման կամ կասեցման համար:

11.2. Սահմանափակումը կամ կասեցումը կարող է կիրառվել, եթե Դուք օգտագործում եք չսերտիֆիկացված կամ Օրանժի Ցանցի հետ անհամատեղելի կամ Օրանժի Ցանցին, դրա պատշաճ աշխատանքին կամ դրանից այլ Բաժանորդների օգտվելուն խոչընդոտող սարքավորում, Դուք խախտել եք Բաժանորդային Պայմանագիրը կամ օրենքը, Դուք անպատշաճ կամ անօրինական եք օգտագործել Ծառայությունները, Դուք ժամանակին, մասամբ կամ ամբողջությամբ չեք կատարել մատուցված Ծառայությունների դիմաց վճարում կամ Հաշվի լիցքավորում, ներառյալ կիրառվող տույժերը, տուգանքները և Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ գումարները,

Ծառայություններին բաժանորդագրվելուց Դուք ոչ ճիշտ կամ ոչ ամբողջական տեղեկություն կամ փաստաթղթեր եք ներկայացրել կամ այլ կերպ բաժանորդագրման պայմանները չեն բավարարվել, Օրանժի կողմից հայտնաբերվել է կասկածելի բնույթի Տրաֆիկ, այդ թվում՝ վիրուսային ծրագրերի կամ սպամի տարածման փորձի փաստեր կամ դրա վերաբերյալ հիմնավոր կասկածներ և այլն: Սահմանափակումը կամ կասեցումը կարող է կիրառվել նաև, եթե անհրաժեշտ է Պահպանման Աշխատանքների իրականացման համար:

11.3. Կասեցման կամ սահմանափակման ընթացքում կարող են կիրառվել որոշ Ծառայությունների (մուտքային և ելքային) մասնակի կամ ամբողջությամբ ապաստիվացումը կամ Ձեզ պատկանող կամ տրամադրված սարքավորման կամ Հեռախոսահամարի անջատումը՝ Օրանժի կողմից սահմանված ժամանակահատվածում և կարգով և այլն: Կասեցման կամ սահմանափակման կարգն ու ժամկետները կարող են նաև պայմանավորված լինել Ծառայության առաջարկով և Սակագնային Պլանով: Կասեցման կամ սահմանափակման հիմքերը վերանալուց կամ ժամկետը լրանալուց հետո իրականացվում է վերաակտիվացվում առանց Ձեզ նախապես ծանուցման:

11.4. Կասեցման կամ սահմանափակման դեպքում վերաակտիվացում կարող է կատարվել Օրանժի նկատմամբ ունեցած բոլոր պարտքերը, տույժերը, տուգանքները և Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ գումարները (եթե կիրառելի են), ինչպես նաև այդ վճարումները հավաքագրելու հետ կապված Օրանժի կողմից կրած բոլոր ծախսերը Ձեր կողմից վճարելու դեպքում և պայմանով, եթե այլ բան չի սահմանվում Օրանժի կողմից կամ Օրանժի և Ձեր փոխադարձ համաձայնությամբ:

11.5. Ծառայության կասեցումը կամ սահմանափակումը Ձեզ չի ազատում հաշվարկված ամսավճարը և կուտակված այլ պարտքերը վճարելու պարտականությունից: Կասեցման և սահմանափակման ամբողջ ընթացքում Ձեր չկատարած պարտավորությունները ենթակա են կատարման Ձեր կողմից՝ Բաժանորդային Պայմանագրով սահմանված կարգով:

11.6. Եթե Դուք հանդիսանում եք մեկից ավելի Հաշվի կամ Հեռախոսահամար օգտագործող և եթե Դուք Օրանժի նկատմամբ ունեք պարտք Ձեզ պատկանող որևէ Հաշվի կամ Հեռախոսահամարի հետ կապված, Օրանժն իրավունք ունի կասեցնել կամ սահմանափակել Ձեզ մատուցվող բոլոր Ծառայությունները և Ձեզ տրամադրված բոլոր Հաշիվները և/կամ Հեռախոսահամարները մինչև պարտքի ամբողջական մարումը:

11.7. Կասեցման կամ սահմանափակման ժամանակահատվածում կամ դրա հետ կապված կարող է գանձվել վճար կամ կատարվել այլ գանձումներ՝ ըստ Ծառայության առաջակի և Սակագնային Պլանի՝ Օրանժի կողմից սահմանված կարգով, եթե նման գանձումը թույլատրելի է:

11.8. Անվտանգության նկատառումներից ելնելով՝ Օրանժն իրավասու է սահմանափակել կամ կասեցնել Ծառայության մատուցումը՝ այդ մասին Ձեզ նախապես տեղեկացնելով կամ խնդրել ժամանակավորապես դադարեցնել Ծառայությունից օգտվելը: Այս դեպքում Դուք պատասխանատվություն եք կրում Ձեր կողմից օգտագործվող SIM Քարտով իրականացվող հաղորդակցությունների համար:

11.9. Այն դեպքում, երբ Դուք կնքել եք որոշակի ժամկետում Օրանժի Բաժանորդ մնալու պարտավորությամբ Բաժանորդային Պայմանագիր՝ Ձեր հայեցողությամբ Ծառայության կասեցման դեպքում, կասեցման ժամանակահատվածը չի ներառվում վերոնշյալ ժամկետի հաշվարկի մեջ և Բաժանորդ մնալու Ձեր պարտավորության



Ժամկետը երկարաձգվում է կասեցման ժամանակահատվածին համապատասխան: Ձեր նախաձեռնությամբ կասեցումը կատարվում է միայն առկա պարտքը մարելու պայմանով: Օրանժը կարող է սահմանափակել նման կասեցումների քանակը և տևողությունը:

11.10. Կասեցման և սահմանափակման ժամանակ Ձեր Հաշվին առկա դրական Հաշվեկշիռը, բոնուսները, Ծառայության Փաթեթները, ավտոմատ գեներացված առաջարկները և այլ արտոնությունները կարող են գրոյացվել, ինչպես ըստ Ծառայության առաջարկի և Սակագնային Պլանի սահմանվում է Օրանժի կողմից:

12. Պատասխանատվություն

12.1. Կողմերը պատասխանատվություն չեն կրում սույն Պայմաններով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե պատճառը անհաղթահարելի ուժի (Ֆորս-մաժորի) ազդեցությունն է: Սույնով Դուք հաստատում և համաձայնվում եք, որ Ձեր ֆինանսական դրությունը չի կարող դիտարկվել որպես ֆորս-մաժոր և Դուք պարտավոր եք ամբողջությամբ վճարել Օրանժի Ծառայությունների համար՝ անկախ Ձեր ֆինանսական դրությունից:

12.2. Օրանժը պատասխանատվություն է կրում Ծառայության ընդհատումների, որակի անկումների, սահմանափակումների, տատանումների ու այլ խափանումների համար, Ծառայությունների պատշաճ մատուցումը ապահովելու ուղղությամբ լավագույն ջանքեր գործադրելու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու չափով՝ Բաժանորդային Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:

12.3. Ծառայության ընդհատումների, որակի վատացումների, սահմանափակումների, արագության տատանումների կամ այլ խափանումների դեպքում Օրանժը կգործադրի իրենից կախված ողջամիտ ջանքերը նման թերությունները և խնդիրները հնարավորինս սեղմ ժամկետներում հայտնաբերելու և վերացնելու և այդպիսի խնդիրների վերաբերյալ Բաժանորդի բողոքների արձագանքելու ուղղությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ և Օրանժի կողմից սահմանված կարգով և ժամկետներում, եթե խնդիրների առաջացման պատճառները իր իրավասության և վերահսկողության ներքո են:

12.4. Մինչև որևէ խնդրի մասին Օրանժին տեղեկացնելը Դուք պարտավոր եք ստուգել Ձեր սարքավորումները և համոզվել, որ պատճառը Ձեր սարքավորումը չէ և Ձեր վերահսկողությունից դուրս է: Եթե Դուք ողջամտորեն ապացուցում եք, որ խնդրի պատճառը Օրանժի Ցանցն է կամ գտնվում է Օրանժի վերահսկողության ներքո, Դուք պարտավոր եք անմիջապես տեղեկացնել Օրանժին, որպեսզի վերջինս ձեռնարկի համապատասխան միջոցառումներ: Այդ մասին Օրանժին ուշ տեղեկացնելու դեպքում, Օրանժը պատասխանատվություն չի կրում տեղեկացնելուն նախորդող ժամանակահատվածի համար:

12.5. Այն դեպքերում, երբ որոշ Ծառայությունների հետ կապված խնդիրների և դրանց պատճառների բացահայտման համար անհրաժեշտ է Օրանժի համապատասխան մասնագետի եզրակացությունը, ապա Ձեր կողմից Օրանժի համապատասխան մասնագետի այցելությունից հրաժարվելու կամ այլ կերպ նրա աշխատանքներին խոչընդոտելու դեպքում Օրանժը պատասխանատվություն չի կրում Ծառայության հետ կապված խնդիրների և դրանց լուծման համար, իսկ Դուք զրկվում եք Օրանժին Ծառայության մատուցման կամ դրա որակի հետ կապված որևէ պահանջ ներկայացնելու իրավունքից: Դուք զրկվում եք մատուցվող Ծառայության կամ դրա որակի հետ կապված որևէ պահանջ ներկայացնելու

իրավունքից, եթե առաջացած խնդիրների մասին սեղմ ժամկետում չեք տեղեկացնում Օրանժին, որի հետևանքով բաց է թողնվում Ծառայության որակի հետ կապված խնդիրների առկայության փաստը հաստատելու և պատճառները պարզաբանելու տեխնիկական հնարավորությունը:

12.6. Եթե Բաժանորդային Պայմանագիրը կնքվում է որոշակի ժամկետով Բաժանորդ մնալու պարտավորությամբ, մինչև Բաժանորդ մնալու պարտավորության ժամկետը լրանալը Ձեր կամ Օրանժի կողմից Բաժանորդային Պայմանագրի լուծման դեպքում, անկախ լուծման պատճառներից, Դուք պարտավոր եք անմիջապես Օրանժին վճարել Բաժանորդային Պայմանագրով սահմանված տույժերը, տուգանքները, հրաժարագինը կամ այլ գումարները և/կամ կատարել հրաժարման հետ կապված Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ պարտականությունները:

12.7. Օրանժը պատասխանատվություն չի կրում այլ օպերատորների և անձանց կողմից մատուցվող ծառայությունների և երրորդ անձանց կողմից կամ նրանց միջոցով Օրանժի Ցանցի կամ այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ մատուցվող ծառայությունների որակի համար և չի տրամադրում որևէ երաշխիք այդ կապակցությամբ, այդ թվում՝ դրանց առնչությամբ ներկայացված հաշիվների համար: Անհրաժեշտության դեպքում նման Ծառայությունները Բաժանորդին հասանելի դարձնելու համար երրորդ անձանց հետ հարաբերությունները Օրանժը կարող է հանդիսանալ Բաժանորդի գործակալ՝ գործելով իր անունից և Բաժանորդի հաշվին:

12.8. ՀՀ օրենսդրությամբ թույլատրելի սահմաններում Օրանժը և Բաժանորդը համաձայնվում են միմյանցից չպահանջել պատճառված անուղղակի վնասների հատուցում, այդ թվում՝ բաց թողնված օգուտը: ՀՀ օրենսդրությամբ թույլատրելի սահմաններում ցանկացած դեպքում Օրանժի պատասխանատվությունը՝ հատուցելու պատճառված վնասները, յուրաքանչյուր Բաժանորդի մասով չի կարող գերազանցել Բաժանորդի մեկ ամսվա գործող ամսավճարի չափը, իսկ ամսավճար սահմանված չլինելու դեպքում մինչև վնասի հաշվարկման պահը Բաժանորդի կողմից Օրանժին միջինում վճարված մեկ ամսվա գումարը:

12.9. Դուք պատասխանատվություն եք կրում Ծառայությունը Բաժանորդային Պայմանագրի խախտմամբ, ինչպես նաև ոչ պատշաճ օգտագործելու և չարաշահումների համար, մասնավորապես, պարբերաբար կամ շարունակական մեծ ծավալի մուտքային կամ ելքային Տրաֆիկի օգտագործման, սպամերի, վիրուսային ծրագրերի փոխանցման կամ այնպիսի գործողությունների դեպքում, որոնք կարող են խախտել այլ անձանց իրավունքները կամ վնաս հասցնել Օրանժի Ցանցին: Մասնավորապես, Դուք պարտավոր եք՝

12.9.1. չիրականացնել գործողություններ, որոնք ուղղված են Օրանժի Ցանցի նորմալ գործունեության խաթարմանը կամ նպատակ ունեն փոփոխել Օրանժի Ցանցի կամ սարքավորման կամ ծրագրային ապահովման կարգաբերումները,

12.9.2. չիրականացնել գործողություններ չթույլատրված հասանելիություն ստանալու և նման հասանելիությունը օգտագործելու նպատակով,

12.9.3. Օրանժի Ցանցով չփոխանցել տեղեկատվություն կամ չիրականացնել գործողություններ, որոնք կարող են ստեղծել չարդարացված բարձր ծանրաբեռնվածություն Օրանժի Ցանցում կամ սարքավորումների վրա,

12.9.4. պահպանել ցանկացած տեխնիկական կամ տեղեկատվական ռեսուրսի օգտագործման կանոնները,

12.9.5. չկեղծել սեփական IP հասցեն, ինչպես նաև այլ ցանցային պրոտոկոլներում և ինտերնետում տվյալներ փոխանցելիս օգտագործվող IP հասցեները:



Ձեր վերջնակետային սարքավորումից վիրուսային ծրագրերի և/կամ սպամի առաքման դեպքում կհամարվի, որ վնասը պատճառվել է Ձեր գործողության կամ անգործության հետևանքով:

Սույն կետում սահմանված խախտումների հայտնաբերման դեպքում Օրանժի կողմից նման գործողություններ կատարելուց զերծ մնալու վերաբերյալ գրավոր զգուշացում ստանալուց հետո Ձեր կողմից վերը նշված գործողություններից որևէ մեկը կրկին կատարելու կամ խախտումը շարունակելու դեպքում Օրանժն իր հայեցողությամբ իրավունք ունի սահմանափակել Ձեզ մատուցվող Ծառայության արագությունը կամ Տրաֆիկը կամ կասեցնել Ծառայությունը կամ միակողմանի հրաժարվել Բաժանորդային Պայմանագրից, ինչպես նաև պահանջել Ձեր գործողությունների հետևանքով Օրանժին պատճառված վնասների հատուցում:

12.10. Դուք եք պատասխանատվություն կրում Օրանժի կողմից Ծառայություններին տրամադրված հասանելիության միջոցով Ձեր կողմից կատարվող գործարքների (էլեկտրոնային վճարումներ, գնումներ և այլն), էլեկտրոնային խաղերի և այլ շահումով խաղերի մասնակցության, դրանց հետևանքների համար և կրում եք բոլոր ռիսկերը:

13. Լուծում

13.1. Օրանժն իրավունք ունի միակողմանի հրաժարվել Բաժանորդային Պայմանագրից, առանց այդ մասին Ձեզ նախապես տեղեկացնելու (i) Ձեր կողմից Բաժանորդային Պայմանագրի որևէ պայմանի խախտման, (ii) Ծառայությունների անպատշաճ կամ անօրինակյան օգտագործման, (iii) Ծառայությունների համար սահմանված վճարումները սահմանված ժամկետին չկատարելու կամ կուտակված պարտքերը ժամանակին չհարելու և/կամ դրանց հետ կապված Բաժանորդի դեմ վարույթ հարուցվելու, (iv) Բաժանորդին սնանկ ճանաչելու կամ իրավաբանական անձ Բաժանորդի լուծարման, (v) Բաժանորդի դեմ սնանկության կամ լուծարման վարույթ հարուցված լինելու կամ այդպիսի որոշում կայացվելու, (vi) Ծառայությունների կասեցումից հետո սահմանված կարգով և ժամկետներում Ծառայությունների չվերանակտիվացման (Ձեր Հաշվին Բաժանորդային Պայմանագրով կամ Սակագնային Պլանով սահմանված ժամկետում դրական Հաշվեկշիռի ապահովման համար բավարար դրական մնացորդի բացակայությունը կամ Ծառայության վերանակտիվացման համար Բաժանորդային Պայմանագրով կամ Սակագնային Պլանով սահմանված ժամկետում անհրաժեշտ գործողությունների չկատարումը և այլն) և (vii) օրենսդրությամբ և Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ դեպքերում: Բաժանորդ իրավաբանական անձը պարտավոր է տեղեկացնել Օրանժին լուծարման կամ սնանկացման վարույթ սկսելու կամ այս մասին որոշում կայացնելու մասին, այդպիսի վարույթի հարուցման կամ որոշման կայացման պահից 1 (մեկ) օրվա ընթացքում:

13.2. Բաժանորդային Պայմանագիրը լուծվում է Օրանժի լիցենզիայի դադարման դեպքում:

13.3. Դուք իրավունք ունեք միակողմանի հրաժարվել Բաժանորդային Պայմանագրից՝ այդ մասին առնվազն 7 (յոթ) աշխատանքային օր առաջ կամ Օրանժի համար ընդունելի այլ ժամկետում գրավոր ծանուցելով Օրանժին և մարելով Օրանժի հանդեպ Ձեր բոլոր պարտքերը, եթե այլ բան չի համաձայնեցվում Կողմերի միջև:

13.4. Բաժանորդային Պայմանագրի լուծումը, անկախ դրա հիմքերից, չի ազատում Ձեզ մինչև լուծման պահը և դրա հետ կապված Օրանժի հանդեպ Ձեր ունեցած պարտքը վճարելու պարտավորությունից, ներառյալ, սակայն չսահմանափակելով բոլոր կիրառելի տույժերը, տուգանքները և Բաժանորդային

Պայմանագրով սահմանված այլ գումարները (եթե այդպիսիք կան), ինչպես նաև Օրանժի կատարած ծախսերը:

13.5. Եթե Դուք օգտվում եք այնպիսի Ծառայություններից, որոնց դիմաց հաշվարկված վճարը նշված պահի դրությամբ տեսանելի չէ Օրանժի Բիլինգային Համակարգում, ապա այդ Ծառայությունների համար հաշիվը Ձեզ է ներկայացվում այն Բիլինգային Համակարգում տեսանելի դառնալու պահից, որը Դուք պարտավոր եք վճարել անմիջապես՝ անկախ Բաժանորդային Պայմանագրի լուծման փաստից:

13.6. Բաժանորդային Պայմանագրի լուծման համար Դուք պարտավոր եք ներկայանալ Օրանժի վաճառքի և սպասարկման կետ և լրացնել Օրանժի կողմից սահմանված ձևի դիմում, անհրաժեշտության դեպքում ներկայացնելով լուծումը հիմնավորող փաստաթղթեր, եթե այլ բան սահմանված չէ Օրանժի կողմից:

13.7. Օրանժի կողմից ներկայացված հաշիվների դիմաց վճարումներ չհավաքագրելը չի կարող դիտարկվել որպես չմարված պարտքի վճարման վերաբերյալ Ձեզ պահանջ ներկայացնելու Օրանժի իր իրավունքից հրաժարում:

13.8. Բաժանորդային Պայմանագրի լուծման դեպքում Ձեր կողմից վճարված կանխավճարը, ամսավճարը (բաժանորդային վճարը) կամ դրական հաշվեկշիռը ելթակա չէ վերադարձման, եթե այդպիսի լուծման պատճառ չի հանդիսանում Բաժանորդային Պայմանագրի էական խախտումը Օրանժի կողմից, եթե այլ բան սահմանված չէ:

14. Անվտանգություն

14.1. Օրանժը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց կողմից ուղարկված սպամի, իրականացված հակերային գործունեության, վիրուսների փոխանցման և դրա արդյունքում Ձեզ պատճառված վնասների համար: Դուք պարտավոր եք անձամբ պաշտպանել Ձեր վերջնակետային սարքավորումը վիրուսներից և այլ անձանց անօրինակյան միջամտությունից:

14.2. Օրանժը պատասխանատվություն չի կրում Ծառայությունների և Օրանժի Ցանցի միջոցով ստացված տեղեկատվության և բովանդակության ճշտության, օրինականության և որակի, այդ թվում՝ զանգերի և հաղորդագրությունների բովանդակության համար, եթե Օրանժը չէ դրանց բացառիկ իրավատերը: Օրանժի Ցանցի միջոցով ստացված, փոխանցվող կամ օգտագործվող ցանկացած տեղեկատվություն, ծառայություն կամ բովանդակություն օգտագործվում է Ձեր ռիսկով և պատասխանատվությամբ և Դուք եք կրում դրանց հետ կապված մտավոր սեփականության իրավունքների խախտման, ինչպես նաև դրանց անօրինակյան օգտագործման հետ կապված ռիսկերը:

15. Անհատական տվյալների պաշտպանություն

15.1. Օրանժը պարտավոր է զաղտնի պահել Ձեր կողմից օգտագործվող Ծառայությունների, դրանց վայրի, նպատակի, նպատակակետի, ծավալի և այլ տեխնիկական պայմանների վերաբերյալ ցանկացած տեղեկություն, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

15.2. Օրանժը Բաժանորդային Պայմանագրի կնքման պահից իրականացնում է Ձեր անհատական տվյալների մշակում՝ Բաժանորդային Պայմանագրի նպատակներից ելնելով՝ օգտագործելով իր ծրագրասարքավորումային միջոցները: Անհատական տվյալների մշակումն անհատական տվյալների հետ որոշակի միջոցառումների և գործողությունների իրականացումն է կապված անհատական տվյալների հավաքման, համակարգման, մուտքագրման, վերափոխման, փոխանցման, պահպանման, ուղղման, ուղեփակման, թարմացման, փոփոխման, օգտագործման, տարածման, ոչնչացման հետ, այդ թվում՝



ապահանջատականացում և բլոկավորում, Բաժանորդի տվյալների օգտագործում Բաժանորդին հաշիվ ներկայացնելիս, հաշվի մանրամասն վերծանումը ըստ մատուցված Ծառայությունների, ինչպես նաև Բաժանորդի տվյալների օգտագործումը նմանատիպ այլ տեղեկատվության տրամադրման հետ կապված:

15.3. Բաժանորդային Պայմանագրի կնքման պահից Դուք թույլատրում եք մշակման նպատակով Օրանժի կողմից Ձեր վերաբերյալ անհատական տվյալների փոխանցումը՝ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ՀՀ տարածքից դուրս՝ առանց Ձեզ ծանուցման՝

15.3.1. երրորդ անձանց, որոնք իրականացնում են անհատական տվյալների մշակում, պահպանում և տեղեկատվության տրամադրում պարտապանների կողմից իրենց պարտավորությունների կատարման վերաբերյալ,

15.3.2. երրորդ անձանց, որոնք Օրանժից ստացել են մատուցված Ծառայությունների դիմաց Բաժանորդի կողմից կուտակված պարտքը պահանջելու կամ դատական կարգով բռնագանձելու իրավունքը.

15.3.3. իր մատակարարներին և ծառայություն մատուցողներին՝ Ծառայության մատուցման կամ իր գործունեությանը վերաբերող ուսումնասիրություն անցկացնելու համար,

15.3.4. իր գործակալներին, դիլերներին, դիստրիբյուտորներին, ֆրենչայզներին կամ այլ ծառայություն մատուցողներին, որոնք իրականացնում են Օրանժի ապրանքների կամ Ծառայությունների վաճառք կամ նմանատիպ այլ գործունեություն,

15.3.5. երրորդ անձանց, որոնք լիազորված են հավաքագրելու վարկային պատմություն կամ իրականացնելու վարկունակության գնահատում,

15.3.6. իր բաժնետերերին, ներկայացուցչություններին, մասնաճյուղերին, դուստր և կախյալ ընկերություններին,

15.3.7. անվտանգության ապահովման նպատակներով:

15.4. Օրանժը կամ իր գործընկերները, որպես մարքեթինգային կամ առևտրային գործունեության մի մաս, ինչպես նաև պարտքերի հավաքագրման կամ Ձեր նույնականացման տվյալների ճշգրտման և թարմացման համար, գրավոր ձևով, հեռախոսով, SMS/MMS ծառայությունների միջոցով կամ այլ կերպ կարող են կապ հաստատել Ձեզ հետ՝ օգտագործելով Ձեր անհատական տվյալները: Նշվածը ներառում է նաև Օրանժի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ Ձեզ տեղեկատվական և գովազդային բնույթի հաղորդագրությունների ուղարկումը: Սույնով Դուք թույլատրում եք այս ձևով կապի հաստատումը Ձեզ հետ:

15.5. Սույնով Դուք ընդունում եք, որ Օրանժի կողմից մատուցվող որևէ Ծառայությունից, վաճառվող որևէ ապրանքից կամ հատուկ պայմաններով որևէ առաջարկից օգտվելիս Ձեր կողմից Օրանժի նկատմամբ ստանձնած պարտավորությունների չկատարման մասին տեղեկությունները Օրանժի կողմից ՀՀ օրենսդրությանը համապատասխան կարող են տրամադրվել ՀՀ-ում գործող վարկային բյուրոներին՝ օրենքով սահմանված նպատակով օգտագործման համար: Սույնով Դուք լիազորում եք Օրանժին, իր հայեցողությամբ և առանց Ձեզ տեղեկացնելու, ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ՀՀ-ում գործող վարկային բյուրոներին՝ վերջիններիս դիմումով կամ իր նախաձեռնությամբ վերոնշյալ նպատակով տրամադրել Ձեր կողմից Օրանժի նկատմամբ ստանձնած պարտավորությունների չկատարման մասին տեղեկություններ, այդ թվում՝ օգտագործված Ծառայությունների դիմաց

վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների մասին տեղեկություններ, ներառյալ՝ տեղեկանքներ:

15.6. Օրանժը երաշխավորում է, որ Ձեր անհատական տվյալների օգտագործման հետևանքով Դուք վնասներ չեք կրի, չեն խախտվի Ձեր իրավունքները և օրինական շահերը: Այդ նպատակով, երրորդ անձանց Ձեր անհատական տվյալները տրամադրելիս Օրանժը պարտավորեցնում է նրանց պահպանել Ձեր տվյալների գաղտնիությունն ու անվտանգությունը:

15.7. Բաժանորդային Պայմանագիրը կնքելու պահից Դուք միանշանակ տալիս եք Ձեր համաձայնությունը Օրանժի կողմից Ձեր անհատական տվյալների մշակումը իրականացնելու համար:

15.8. Օրանժն իրավունք ունի Ծառայությունների որակի բարձրացման, անվտանգության նկատառումներով և Բաժանորդային Պայմանագրի այլ նպատակներից ելնելով ձայնագրել Ձեր խոսակցությունները Օրանժի Հաճախորդների սպասարկման կենտրոնի կամ վաճառքի և սպասարկման կետի աշխատակիցների հետ: Նման խոսակցությունները կարող են վերաբերվել առանց սահմանափակման Ծառայությունների ցանկի, բաժանորդագրման տեսակի կամ Սակագնային Պլանի փոփոխմանը, դիտողություններ, բողոքներ կամ առաջարկներ ներկայացնելուն, տեղեկատվություն ստանալուն կամ Ծառայությունների մատուցման և դրանցից օգտվելու վերաբերյալ խորհրդատվություններ ստանալուն և այլ դեպքերին: Բաժանորդային Պայմանագրի կնքման պահից Դուք տալիս եք Ձեր համաձայնությունը այդպիսի ձայնագրման վերաբերյալ և ընդունում եք, որ նման ձայնագրություններն ունեն ապացույցի ուժ:

15.9. Դուք իրավունք ունեք պահանջել փոփոխելու Ձեր վերաբերյալ Օրանժում առկա անհատական տվյալները՝ դիմելով Օրանժի Հաճախորդների սպասարկման կենտրոն կամ վաճառքի և սպասարկման կետ և ներկայացնելով Օրանժի կողմից սահմանված ձևի դիմում և Օրանժի կողմից պահանջվող այլ անհրաժեշտ փաստաթղթեր: Օրանժն իրավունք ունի նաև անհրաժեշտության դեպքում պահանջել այլ հիմնավորումներ:

15.10. Բաժանորդային Պայմանագրի հետ կապված բոլոր տվյալների, այդ թվում՝ Ձեր նույնականացման տվյալների անվտանգությունն ու գաղտնիությունը ապահովելու համար Դուք պարտավոր եք ձեռնարկել բոլոր անհրաժեշտ և հնարավոր օրինական միջոցները:

16. Տարածայնությունների կարգավորում

16.1. Սույնով Դուք համաձայնվում եք, որ մինչև Օրանժի կողմից մատուցվող Ծառայության կամ Բաժանորդային Պայմանագրով սահմանված որևէ հարցի կամ դրա հետ կապված որևէ տարածայնության կապակցությամբ դատարան կամ այլ իրավասու մարմին դիմելը Դուք Ձեր պահանջը գրավոր կներկայացնեք Օրանժ: Նման պահանջները քննարկվում են Օրանժի կողմից սահմանված ժամկետում:

16.2. Օրանժի և Ձեր միջև սույն Պայմանների կամ Բաժանորդային Պայմանագրի կապակցությամբ ծագած ցանկացած տարածայնություն ենթակա է վերջնական կարգավորման Հայաստանի Հանրապետության դատարաններում, այդպիսի տարածայնության ծագման օրվանից 60 (վաթսուս) օրվա ընթացքում համաձայնության չհասնելու դեպքում:

16.3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշ դեպքերում Ծառայություններից օգտվելիս առաջացած ընդհատումների, սահմանափակումների և այլ խափանումների պատճառները հնարավոր է պարզել միայն նման խնդիրների առաջացման պահին կամ այդ պահից սկսած որոշակի սահմանափակ ժամանակահատվածի ընթացքում, այդ պատճառով դրանց



վերաբերյալ Ձեր դիմումները կամ բողոքները կարող են քննության առև՛ել և ընթացք տրվել միայն այն դեպքում, եթե ստացվել են Ձեր կողմից խնդրի առաջացման պատճառների պարզաբանման համար տեխնիկապես թույլատրելի ժամանակահատվածում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք զանգվածային բնույթ են կրել և պատճառները Օրանժի հայտնի են:

17. Եզրափակիչ դրույթներ

17.1. Սույն Պայմաններն ուժի մեջ են մտնում 2011թ. նոյեմբերի 4-ին: Սույն Պայմանների ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է համարվում Օրանժի կողմից նախկինում հայտարարված հանրային շարժական կապի ծառայությունների մատուցման հրապարակային օֆերտան (հանրային շարժական կապի ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներն ու պայմանները) և բոլոր նոր բաժանորդագրությունների վրա տարածվում են սույն Պայմանները:

17.2. Սույն Պայմաններն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող Սակագնային Պլանները, Ծառայության Առաջարկները և Գնացուցակները մնում են ուժի մեջ:

17.3. Բաժանորդային Պայմանագիրը գործում է անորոշ ժամկետով: Որոշ դեպքերում Բաժանորդային Պայմանագիրը կարող է կնքվել որոշակի ժամկետով Բաժանորդ մնալու պարտավորությամբ՝ դրա դիմաց առաջարկելով առավել ցածր գին կամ լրացուցիչ երաշխիքներ կամ արտոնություններ: Այդ ժամկետը լրանալուց հետո Բաժանորդային Պայմանագիրը շարունակում է գործել, եթե չի լուծվում Ձեր կամ Օրանժի կողմից Բաժանորդային Պայմանագրով կամ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

17.4. Դուք պարտավոր եք բաժանորդագրվելիս և Բաժանորդային Պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում ապահովել Օրանժին տրամադրվող տեղեկատվության ճշգրտությունը և հավաստիությունը և պատասխանատվություն եք կրում դրա համար: Դուք պարտավոր եք Օրանժին պատշաճ կերպով տեղեկացնել Ձեր վերաբերյալ գրանցված տեղեկություններում (հասցե, բանկային տվյալներ, ֆիրմային անվանում, կազմակերպարկական ձև և այլն) տեղի ունեցած փոփոխությունների մասին դրանց իրավական ուժ ստանալու պահից ոչ ուշ քան 5 (հինգ) օրվա ընթացքում: Դուք կրում եք այդ փոփոխությունների մասին Օրանժին հայտնելու պարտավորության խախտման հետ կապված բոլոր հնարավոր ռիսկերը:

17.5. Բաժանորդային Պայմանագիրը և դրանում կատարվող փոփոխությունները, լրացումները, դրա բաղկացուցիչ մասը կազմող կամ դրան վերաբերող այլ փաստաթղթերը և ծանուցումները կարող են հաստատվել ստորագրությունները և/կամ կնիքները թղթային օրինակների վրա դնելու, ինչպես նաև մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով՝ ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ ստորագրության այլ նմանօրինակի օգտագործմամբ, այդ թվում, բայց չսահմանափակվելով՝ էլեկտրոնային փոստով ուղարկված փաստաթուղթը ստորագրելու և էլեկտրոնային փոստով վերադարձնելու միջոցով:

17.6. Բաժանորդային Պայմանագրի շրջանակներում Ձեր և Օրանժի կողմից ուղարկված ծանուցումները, այդ թվում՝ հաշիվները, համարվում են պատշաճ, եթե հանձնվել են առձեռն կամ ուղարկվել են էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով (փոստով, SMS-ով, վեբ կայքի, էլ. փոստի միջոցով և այլն), Բաժանորդային Պայմանագրի ստորագրման պահին կամ հետագայում պատշաճ կարգով Օրանժի և Ձեր կողմից տրամադրված բնակության/գործունեության, էլեկտրոնային

փոստի հասցեներով և հեռախոսահամարներին, եթե այլ բան սահմանված չէ Բաժանորդային Պայմանագրով:

17.7. Եթե Ձեր կողմից ներկայացվող հայտերի, դիմումների և այլ փաստաթղթերի համար Օրանժը սահմանել է հատուկ ձև, ապա Ձեր կողմից դրանք հաստատված ձևաթղթին անհամապատասխան ներկայացնելու դեպքում Օրանժն իրավունք ունի չընդունել դրանք և ընթացք չտալ:

17.8. Օրանժն իրավասու է հայտարարել ակցիաներ և զեղչեր, որոնք հայտարարված ժամանակահատվածում կհանդիսանան Բաժանորդային Պայմանագրի լրացում և դրա բաղկացուցիչ մասը: Ակցիաները կարող են գործել մշտապես կամ սահմանափակ ժամանակահատվածում, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Օրանժի վեբկայքում (www.orangearmenia.am) և/կամ հասանելի դարձվում վաճառքի և սպասարկման կետերում, ԶԼՄ-ներով և/կամ Ձեզ հասանելի այլ ձևերով: Հայտարարված ակցիաները և զեղչերը Ձեր կողմից ընդունելու կարգը յուրաքանչյուր անգամ սահմանվում է տվյալ ակցիայի կամ զեղչի պայմաններով:

17.9. Օրանժն իրավունք ունի ներկայացնել հրապարակային օֆերտա (առաջարկ) Բաժանորդային Պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, ներառյալ, սակայն չսահմանափակվելով սույն Պայմանների, կիրառելի գների, Սակագնային Պլանների, Գնացուցակի, Առաջարկների Նկարագրի, Վճարումների, հայտարարված ակցիաների և այլնի վերաբերյալ: Փոփոխությունների մասին առաջարկը հրապարակվում է այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առաջ՝ վաճառքի և սպասարկման կետերում և/կամ Օրանժի վեբ կայքում (www.orangearmenia.am) և/կամ այլ ԶԼՄ-ներով և/կամ Ձեզ հասանելի այլ ձևերով: Նախքան հայտարարված փոփոխություններն ուժի մեջ մտնելը դրանց վերաբերյալ առարկության ծանուցում չներկայացնելը կամ դրանց ուժի մեջ մտնելուց հետո Ձեր կողմից Ծառայություններից օգտվելը շարունակելը համարվում է, որ Դուք ընդունում եք Օրանժի կողմից փոփոխություններ կատարելու մասին առաջարկը (ակցեպտավորում): Փոփոխություններն ուժի մեջ են մտնում դրանց մասին հրապարակված հայտարարության մեջ նշված ժամկետում: Ձեր կողմից սույն կետում սահմանված կարգով առարկություններ ներկայացնելու դեպքում, Դուք իրավունք ունեք միակողմանի հրաժարվել Բաժանորդային Պայմանագրից Բաժանորդային Պայմանագրով սահմանված կարգով՝ այդ մասին տեղեկացնելով Օրանժին մինչև փոփոխություններն ուժի մեջ մտնելը: Բաժանորդային Պայմանագրում Բաժանորդի համար դրական փոփոխությունների հրապարակային օֆերտան չի կարող հանդիսանալ Բաժանորդային Պայմանագրից հրաժարվելու հիմք:

17.10. Ձեզ համար բարենպաստ փոփոխությունները Օրանժը կարող է կատարել առանց նախապես ծանուցման, անմիջապես, փոփոխությունը կատարելուց հետո տեղեկացնելով Ձեզ:

17.11. Օրանժն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասամբ փոխանցել իր իրավունքները կամ զիջել իր պարտավորություններն այլ անձի՝ առանց Ձեր համաձայնության և Ձեզ որևէ հատուցում տալու պարտականության:

17.12. Դուք իրավունք չունեք Բաժանորդային Պայմանագրով ստանձնած Ձեր իրավունքները և պարտավորությունները փոխանցել երրորդ անձի՝ առանց Օրանժի նախնական համաձայնության:

17.13. Եթե Բաժանորդային Պայմանագրի որևէ դրույթ կամ դրա կիրառումը որևէ անձի նկատմամբ կամ որևէ դեպքում իրավասու դատարանի կամ այլ իրավասու մարմնի կողմից ճանաչվել է անվավեր, առոչինչ, անօրինական կամ ոչ



կիրառելի, ապա նման անվավերությունը անօրինականությունը կամ անկիրառելիությունը չի անդրադառնում Բաժանորդային Պայմանագրի մյուս դրույթների վրա:

17.14. Բաժանորդային Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով: Եթե բացի հայերեն լեզվից այն կազմված է նաև այլ լեզվով, ապա գերակայում է հայերեն տարբերակը:

18. Անցումային դրույթներ

18.1. Սույն Պայմանները հանդիսանում են նախկինում Օրանժի կողմից հայտարարված հանրային շարժական կապի ծառայությունների մատուցման հրապարակային օֆերտան (հանրային շարժական կապի ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներ ու պայմաններ) և դրա հիման վրա կնքված Բաժանորդային Պայմանագրերը փոփոխելու հրապարակային օֆերտա: Սույն Պայմանները հանգեցնում են Օրանժի և Բաժանորդի միջև նախկինում Օրանժ կողմից հայտարարված հանրային շարժական կապի ծառայությունների մատուցման հրապարակային օֆերտայի հիման վրա կնքված և գործող Բաժանորդային Պայմանագրերի փոփոխության, եթե Բաժանորդը չի հրաժարվել Բաժանորդային Պայմանագրից մինչև սույն Պայմանների ուժի մեջ մտնելը և շարունակել է օգտվել Ծառայություններից դրանց ուժի մեջ մտնելուց հետո (Բաժանորդի կողմից սույն օֆերտայի ակցեպտավորում), բացառությամբ սույն Պայմանների 18.2 կետում սահմանված դեպքերի:

18.2. Սույն Պայմանները չեն տարածվում այն Բաժանորդների նկատմամբ, ովքեր մինչև սույն Պայմաններն ուժի մեջ մտնելը Օրանժի նկատմամբ ունեն որոշակի ժամկետում Բաժանորդ մնալու պարտավորություն: Այդ Բաժանորդների նկատմամբ կիրառվում է նախկինում Օրանժի կողմից հայտարարված հանրային շարժական կապի ծառայությունների մատուցման հրապարակային օֆերտան (հանրային շարժական կապի ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներ ու պայմաններ) և դրա հիման վրա կնքված Բաժանորդային Պայմանագրերը: Որոշակի ժամկետում Բաժանորդ մնալու պարտավորության ավարտման պահից Բաժանորդի նկատմամբ կիրառվում են սույն Պայմանները՝ փոխարինելով նախկինում Օրանժի կողմից հայտարարված հանրային շարժական կապի ծառայությունների մատուցման հրապարակային օֆերտային (հանրային շարժական կապի ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներ ու պայմաններ) և դրա հիման վրա կնքված Բաժանորդային Պայմանագրերի պայմանները համարվում են փոփոխված՝ սույն օֆերտայի պայմաններով: